

Собрание

9(47.925)  
У-43

1911







(47.925)

2-43

19 AUG 2011  
24 JAN 2006

պո.

ՆԱԶԱՐԷԹ Մ. ԱՂԱԶԱՐՄ

# ՆՕԹԵՐ

ԵԳԻՄՏՈՍԻ ՀԱՅ ԳԱՂՈՒԹԻՆ ՎՐԱՅ

1004  
16572

2



Գ Ա Հ Ի Ր Է  
ՏՊԱԳՐ. ԶԱՐԵՂ Ն. ՊԷՐՊԷՐԵԱՆ  
1911






**ՏԻԳՐԱՆ ՓԱՇԱ ԱՊՐՕ**  
ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԿԻՆ ՆԱԽԱՐԱՐ ԵԳԻՊՏՈՍԻ  
(1846—1904)







Ի Յ Ի Շ Ա Տ Ա Կ

Յ Ա Ի Է Տ Ո Ղ Բ Ա Յ Ե Ա Լ

# ՏԻԳՐԱՆ ՓԱՃԱ ԱՊՐՈՅԻ

Ի ՆՇԱՆ ԵՐԱԿՏԱԳԻՏՈՒԹԵԱՆ

ՍԵԴՐԱՔ ԴԱԻԹԵԱՆ



## Յ Ա Ռ Ա Զ Ա Ք Ա Ն

Մեր բարեկամ Յովհաննես ԷՖ. Շահնազար թուականես սասը սարի յառաջ՝ Փարիզէն մեզ կը գրէր. «Օտարները ձեռնարկած են Հայերուն վրայ մեհագրութիւն մը հրատարակել ոչ իբր՝ շահախնդրական գործ, այլ իբրեւ նոր միջոց մը՝ Եւրոպայի մէջ մեր խնդիրը նոր ձեւերու տակ յուզելու, եւ մեզի համար, Եգիպտոսի Հայ գաղթականութեան համար, զգալի շահ մը կայ որ չգիտին — մեզմէ յուսահատ — սխալ կամ աննիւթ աղբիւրներու»:

Շահնազար ԷՖ. կը խնդրէր որ յիշեալ մեհագրութեան մէջ զետեղուելու համար Եգիպտոսի Հայ գաղութին պատմական ընկիւնէ եւ մանրամասն տեղեկութիւններ տայինք անոր կացութեան, թիւին, վարժարաններուն եւ այլոց մասին:

Թէեւ մեր ժամանակն ու կարողութիւնը չէին բաւեր այս տեսակ ուսումնասիրութեան մը համար, մանաւանդ որ գաղութին անցեալը պէտք եղած կերպով պատկերացնելու համար անհրաժեշտ տարրերն ամենամեծ մասամբ կը պակսէին մեզ, եւ կը պակսէր նաեւ լիակատար ուսումնասիրութեան մը համար անհրաժեշտ արաբերէն գրական լեզուի ու-

սուր, սակայն տեղի տալով Շահնագար ԷՖ.ի ստի-  
պումներուն եւ մասնաւորաբար ի նկատի ունենա-  
լով գործին ազգօգուտ նպատակը, առձեռն գտնուած  
միջոցներուն ու մեր ժամանակին եւ կարողութեան  
ներած չափով պատրաստեցինք տեսակ մը — Նօթեր  
Յգիպտոսի Հայ Գաղութին վրայ — եւ դրկեցինք մեր  
բարեկամին ի Փարիզ:

Հիմայ որ Վոսիփորի ափերուն վրայ Սահմանա-  
դրութիւն հրատարակուելուն հետեւանով մամուլն  
ազատ է, ազատ է հետեւաբար այս Նօթերուն  
մուտքն ի Քուրքիա, օգտակար համարեցինք անոնք  
ընդարձակելով մամուլին յանձնել ի հարկէ ընելով  
այն փոփոխութիւններն, որոնց ենթարկուեցաւ անկէ  
ի վեր Եգիպտոսի գաղութին կացութիւնը:

Այս գրեցիկին աղբիւրներն են Աբուսահիլի Պատ-  
մութիւնը, Տր Վ.օժանիի «Յգիպտոսի Պատմութիւնը»,  
«Յգիպտոսի Վերաբերեալ Դիւանագիտական Վաւերա-  
գրերու եւ Կայսերական Հրովարտականքու Հաւաքա-  
ծոն», Աղեփանդը Հօլեմսֆիի «Նուպար փառա Պատ-  
մութեան առջեւ» անուն գործն եւ տասնի չափ ու-  
րիւ գրքեր: Օգտուած ենք նաեւ մեր յեգիպտոս  
տուրջ երեսուն տարուան բնակութեամբ ստացած  
անձնական ծանօթութիւններէն եւ ականատես եւ  
ականջալուր արժանահաւաս ծերունիներու տուած  
բերանացի տեղեկութիւններէն:

Շատ փափաքելի է որ գեթ ապագային մեզ Ե-  
գիպտահայ գաղութը իր յիսկատար պատմութիւնը  
ունենայ: Սիրելի է մեզ յուսալ թէ այս գրեցիկը

պիտի կրնայ ծառայել իբր այդ պատմութեան տար-  
րերէն մէկը :

Ի վերջոյ պարտք կը համարին շնորհակալու-  
թիւն լայնել Ազն. Սեդրաբեկ. Դաւթեանի, որ  
հանեցաւ այս գրեթէ անսպասելի քաղաքական ծախսը հոգալ,  
նուիրելով զայն Տիգրան փառա Ապրոյի անմոռաց  
յիշատակին :

Ն. Մ. Ա.







Ն Օ Թ Ե Ր

## ԵԳԻՊՏՈՍԻ ՀԱՅ ԳԱՂՈՒԹԻՆ ՎՐԱՅ



Ա .

ՀԱՅԵՐԸ ՖԱԹԻՄԵԱՆՆԵՐՈՒ ԻՇԽԱՆՈՒԹԵՆԷՆ ՅԱՌԱՋ

Եգիպտոսի պատմութիւնը կ'սկսի Քրիստոսէ 5004 տարի յառաջ և շատ դժուար է ճշդել թէ Հայերն ո՛ր թուականէն ի վեր սկսան դադլթել Նեղոսի հովիտը : Սակայն պատմութիւնը կը հաստատէ թէ Հայերը շատ կանուխէն առեւտրական յարաբերութիւններ ունէին Եգիպտոսի հետ : Գիտուններէն ոմանք կը կարծեն թէ Եգիպտոսի 3—4000 տարուան արձաններուն վրայ դրոշմուած «Ար-ւէնէն» բառը կը ցուցնէ Հայոց ազգն, որու

հետ նոր կայսրութեան(\*) աշխարհակալ փարաւոններ բաղխեցան Քրիստոսէ 15 — 16 դար առաջ: Հայերու մէկ արի, Հռոմայեցիներու յաղթական բայց դժբաղդ թագաւորը, Արտաւազդ Ա. որ օտար պատմիչներու գրածին նայելով բանաստեղծական գրուածներ ալ թողած է, Քրիստոսէ 32 տարի առաջ՝ Նռապետ Անտոնիոսէն նենդութեամբ բռնուած, ոսկի շղթայի զարնուած ու բերուած է Աղէքսանդրիա, ուր Անտոնիոսի հոմանի կղէոպատրա թագուհիին խոնարհութիւն չընելուն համար՝ երեք տարի բանտարկուած ու ետքը գլխատուած է իր գեղեցկութիւնով ու անգթութիւնով միանգամայն անուանի այդ կնոջ հրամանով:

Թագուհի մըն էր նաև Հեղինէ, որ սակայն երեւելի եղաւ գթութեան գործերով: Հայերու Աբդար թագաւորին ամուսինն էր Հեղինէ, որ իր կենաց վերջին մասը երուսա-

---

(\*) Եգիպտոսի պատմութիւնը « կայսրութեանց » երեք շրջան ունի. Հին, Միջին ու Նոր: Հինը կ'սկսի Քրիստոսէ 500՛ տարի յառաջ և կը վերջանայ 306՛ին, Միջինը կ'սկսի 306՛ին եւ կը վերջանայ 1703՛ին, Նորը կ'սկսի 1708՛ին և կը վերջանայ 34՛ին:



դէմ անցուց և Քրիստոնէութեան առաջին դարուն մեծ սովին ժամանակ, իր անձնական ծախքով մեծաքանակ ցորեն բերել տուաւ Եդիպտոսէն և քաղաքին կարօտեալներուն բաշխեց :

Հինգերորդ դարուն Հայ ուսանողներու խումբ մը Աղէքսանդրիա ղրկուած և ժամանակին ուսմանց ու գիտութեանց մէջ շատ նշանաւոր հանդիսացած է : Այս խումբն Ետրէն Հայաստան վերադառնալով՝ լուսաւորութեան մեծ սատար եղած է և հեղինակած ու թարգմանած բազմաթիւ և կարեւոր գրքեր : Պարագլուխները, Մովսէս Խորենացի և Եղիշէ թողած են ինքնագիր գործեր, որոնք թարգմանուած են Փրանսերէնի, Անգլիերէնի, Իտալերէնի և Եւրոպական ուրիշ լեզուներու, և բանասիրական աշխարհին խորին ուշադրութեան արժանացած :



ՀԱՅԵՐԸ ՖԱԹԻՄԵԱՆՆԵՐՈՒ ՕՐՈՎ

(916—1160 ք. Ե.)

Հինգերորդ դարէն յետոյ կամաց կամաց շատցաւ Եգիպտոսի Հայերու թիւը: Է. դարուն հոն ունեցած ենք անուանի հայրենակիցներ: Գահիրէ քաղաքը 970ին հիմնուած ժամանակ, վարդան, ծագումով Հայ, որ նախ յոյն կայսրերու զօրապետ եղած էր, Եգիպտոսի հարկապետ էր և ինք շինեց նորակառոյց մայրաքաղաքին շուկան, որ երկար դարեր իր անունը կրեց: Եգիպտոսի մէջ Հայերը տասնեակ հազարներով կը հաշուուէին տասն և մէկերորդ դարուն վերջերն, այնպէս որ ժամանակին կաթուղիկոսը, Գրիգոր Վկայսէր այցելութիւն տուաւ անոնց և յատուկ Եպիսկոպոս ձեռնադրեց անոնց համար:

Ճիշտ այս միջոցին էր որ Եգիպտոսի մէջ կը փայլէր հայազգին Պատր էլ կամալի: Փաթիմեան Խալիֆաներէն Մուսթանզար, որ 1036էն 1094 իշխեց Եգիպտոսի վրայ, տեսնելով որ իր գահը հզօրագոյն թշնամիներու երկարատեւ պատերազմաց երեսէն հիմնայա-

տակ կործանելու վրայ է, Եգիպտոս կը հրա-  
ւիրէ յիշեալ Պատրը, որ կուսակալ էր Գա-  
մակոս քաղաքին: Մուսթանդար՝ Պատրի կը  
շնորհէ Բանակներու իշխան (Էմիր ալ կըլայուշ)  
տխտղոսը և ուրիշ տխտղոսներ, անոր անձին  
վրայ կը միայնէ քաղաքային, ղինուորական և  
եղևտական բացարձակ և բովանդակ իշխա-  
նութիւնը, զոր Պատր վարեց ամբողջ քսան  
տարիներ: Պատր, վաճառականութիւնը եւ  
արուեստները ծաղկեցնելու համար հաղարա-  
ւոր հայ դաղթականներ յատկապէս Եգիպ-  
տոս բերել տուաւ: Պատր էլ կամալի աջա-  
կից գտնուած է Եգիպտոսի մէջ հայ վանքե-  
րու և եկեղեցիներու շինութեան և պահպա-  
նումին. ինք քակել և աւելի ամրակուռ եւ  
ընդարձակ բարձրացնել տուած է Գահիրէի  
պարիսպները, կառուցած է նաեւ պետական  
և անձնական հոյակապ շէնքեր:

Պատրի ատեն, ինչպէս կը գրէ պատմիչ  
մը, «Եգիպտոսի երկրագործութիւնն ու վա-  
ճառականութիւնը նորէն զարգացան, սովը  
անհետացաւ և առատութիւնը տիրեց, որով-  
հետեւ Պատր կամալի իր բոլոր ճիգը կը  
թափէր ժողովուրդը երջանիկ ընելու և անոր  
մոռցնելու չարիքները, որոնցմէ երկար ատեն

տառապած էր : Եգիպտոս , որ քիչ առաջ  
չատ աղէտներու երեսէն աւերակ դարձած էր ,  
սկսաւ շէննալ և ծաղկիլ : ա՛յն աստիճան որ-  
չափ երբէք եղած չէր անցեալին մէջ :

Մուստանզար խալիֆային և Պատր էլ  
կամալի մահը պատահեցաւ 1094 ին . Պատրի  
որդին Շահնշահ կամ Ալ Աֆտալ հօրն յաջորդ-  
հռչակուեցաւ անմիջապէս . Եգիպտացիները  
Մուստանզար խալիֆային անդրանիկ որդին ,  
Նիզարը , հօրը յաջորդ ընտրելու տեղ , ընտ-  
րեցին Մօստալի , անոր երկրորդ որդին , որ  
կերեւայ թէ աւելի կարող և արժանաւոր մէկն  
էր . Աֆրանգին մեծ էմիրը զէնքով պաշտպա-  
նեց Նիզարը , բայց Շահնշահ պատերազմեցաւ  
անոնց դէմ , յաղթեց , երկուքն ալ բռնեց և  
դահը ապահովեց Մօստալիի համար :

Շահնշահ պատերազմեցաւ նաև Երուսա-  
ղեմի Պաղտին թագաւորին դէմ , որու հետ  
զինադուլ ըրաւ 1115 ին : Այս ատենները  
Մօստալի վախճանած և անոր յաջորդած էր  
Ամէր խալիֆան որ վախճալով Շահնշահի մեծ  
ժողովրդականութենէն , փառքէն ու փայլէն ,  
գաղտագողի հետամուտ էր անոր կենաց վերջ  
տալու , ի՛նչ որ Իշխանասպան կոչուած աւա-  
զակներու ձեռքով յաջողցուց 1122 ին : Ամէր

Շահնշահը սպաննել տալէ ետքը՝ գրաւեց անոր ստացուածքը, որ թանկագին գոհարներէ, ուրիշ զանազան նիւթերէ և չորս միլիօն ոսկիէ կը բաղկանար: Ամէր բանտարկել տուած էր նաև Շահնշահի որդին, Ապուհալի, սակայն անոր բարեկամները զրգուեցին Շահնշահը սպաննողները, որ վերջ տուին Ամէրի կեանքին և Ապուհալին բանտէն հանելով՝ հօրը յաջորդ կարգեցին: Ապուհալի քիչ մնաց որ Եգիպտոսի Խալիֆա հռչակուէր, սակայն Ամէրի եղբայրը, Հաֆզ, գրաւեց Եգիպտական դահն և սպաննել տուաւ Ապուհալին: Հաֆզ ալ սակայն շատ չանցած զգաց թէ իր դահնն զօրաւոր նեցուկ միայն Հայերը կրնային ըլլալ, ուստի 1132 ին Վահրամ Պահլաունի՝ Եգիպտոսի Հայոց առաջնորդ Գրիգորիս Եպիսկոպոսի եղբայրը, նախարար և զօրապետ կարգեց Եգիպտոսի: Վահրամ պետութեան թագ (Թաճ էլ-Տէօվլէ) տիտղոսը ստացաւ Խալիֆայէն և երբ Հաֆզի որդին հօրմէն ապստամբեցաւ, զօրքերուն խնդրանաց վրայ Խալիֆան Վահրամը վէղիր կարգեց անոր աեղ: Վահրամ բանակին գլուխն անցած յարձակեցաւ Խալիֆային ապստամբ որդիին վրայ, որ Մայրաքաղաքին մօտ փախաւ Վահրամի առ-

ջեւէն : Մեծանուն զօրապետն անսխալապէս  
խաղաղեցուց ժողովուրդն և բարեկարգեց եր-  
կիրը : Այս գէպքերէն երկու տարի յետոյ  
Վալախշի անուն մէկը ժողովուրդը զրգռեց  
Վահրամի գէմ, ըսելով թէ անսխալ ամէն պա-  
տիւ և պաշտօն Հայերուն և Քրիստոնեանե-  
րուն կը շնորհէ : Վահրամ, որ կարող էր զա-  
նանք գիւրաւ ջախջախելու, « Եզիպտոսը  
Եզիպտացիներուն » ըսելով իրենները զրկեց  
ի Սալիտ և ինքն ալ հօն գնաց, ուր թէփէ  
քաղաքին ( Լուքսոր ) Իշխանն էր իր եղբայրը  
Վասակ : Վալախշի յանկարծ բռնեց և սպանե-  
նեց Վասակը և վերագառնալով ի Գահիրէ  
սկսաւ հալածել Հայերը, բայց ինքն ալ ձեր-  
բակալուեցաւ ու սպաննուեցաւ : Հաֆղ խնդ-  
րեց Վահրամէն որ դարձեալ Վէզիր ըլլայ  
իրեն, Վահրամ չընդունեց և ատեն մը Խա-  
լիֆային պալատին մէջ հիւր մնալէ յետոյ՝  
վանք մը քաշուեցաւ, ուր և մեռաւ : Վահ-  
րամի մեծ արժանիքը հօն է որ իր Հայութիւնը  
և Քրիստոնեական կրօնը յայտնապէս կը դա-  
ւանէր և կը պահէր մինջ և իր կենաց վերջին  
օրը, մինչդեռ իր ազգակից նախորդներէն  
Պատր, կէս Քրիստոնեայի և կէս Մուհամե-  
տականի ընթացք ունէր իր կենդանութեան,

Թէև մահուանէ յետոյ իր կանխաւ բրած  
տնօրէնութեան համաձայն թաղուեցաւ Հայ  
Եկեղեցիի մը մէջ : Պատրի որդին ու թուր,  
Շահնշահ և Ապուհալի դէթ ըստ արտաբին  
երևութին, բոլորովին օտարացած էին Քրիս-  
տոնէութենէ, դուրսէ և Հայութենէ :

Փաթիւմեաններու Խշխանութեան օրով մեր  
այս տեղ յիշածներէն զատ ուրիշ նշանաւոր  
Հայեր ալ Եգիպտոսի մէջ պետական ամենա-  
մեծ պաշտօններ վարած են : Մեր այս համա-  
ուօտագիծ պատկերին սահմանէն դուրս է սա-  
կայն, ի հանդէս բերել այդ բոլոր հայ դէմքերը,  
որոնց վրայ տեղեկութիւն ստանալու վափա-  
քոշները կրնան դիմել Եգիպտոսի լիակատար  
պատճութեան :

Փաթիւմեաններու օրով հայերէ կազմուած  
հեծեալ և հետեւակ դունդեր կային Եգիպ-  
տական բանակին մէջ, հաւանաբար միշտ հայ  
ղօրապետի հրամանին տակ : Կային նաև շատ  
մը հայ վանքեր ու Եկեղեցիներ, որոնց մէջ  
կը յիշատակուէին Կիլիկիոյ Հայ թագաւոր-  
ներու անունները :

Կը համաուօտենք այդ Եկեղեցիներու եւ  
վանքերու մասի պատմութեան մէջ ցիրուցան  
տեղեկութիւնները :

Մեծ գմբեթաւոր և կամարակապ Եկեղեցի մը Ս. Յակոբ անունով, Այգեաստան (Ալ Պասաթին) կոչուած տեղը, Գահիրէէն քանի մը քիլօմէթր հեռու արեւելեան հարաւային կողմը. ծանօթ չէ այս մեծ Եկեղեցիին, ինչպէս ուրիշ հին Եկեղեցիներու հիմնարկութեանց ճիշտ թուականները. ասոր մօտ կար ուրիշ Եկեղեցի մը, որուն բոլորտիքը կային ընդարձակ պարտէզներ, բանջարանոցներ և ցորենի արտեր :

Գահիրէի Հարթէլլուէլա թաղին մէջ Յովհաննէս Մկրտիչ անուն Եկեղեցի մը Ս. Աստուածածին Եկեղեցիին վրայ շինուած : Էղղուհրիի վանքն եւ Եկեղեցին, Գահիրէի և Այգեաստանի մէջտեղ :

Գահիրէի հարաւակողմն Խթֆի քաղաքին մէջ Եկեղեցի մը :

Տուռայի վանքն ու Եկեղեցին, Ս. Գէորգի անունով, մօտ այգեաստանի, անոր հարաւի կողմը : Այս Եկեղեցին ունէր շրջապատ, աղբիւր, ջրաղացք, նարինջի եւ արմաւի ծառեր եւն :

Եկեղեցի մը ի Տաշուր, Կիղէի տիեզերահռչակ բուրգերուն մօտ :

Եկեղեցի մը ՚ի Մէյտում, ձիղէի նահան-



գին մէկ գիւղիւն մէջ, ընկերակցութեամբ  
Խաչատրեան եւ Մելքիթեան :

Ի Ֆէյյում, ուր յատուկ թաղ ունէին Հա-  
յերը, հաւանականաբար կար գէթ մէկ Հայ  
Եկեղեցի :

Երկու Եկեղեցի ու մէկ վանք Ասիութ  
քաղաքին մօտերը, Ալխուսուսի մէջ, երկու  
Եկեղեցի ալ Ալխուսուսէն դուրս, շատ մեծ  
էր այդ կողմերու Հայերուն թիւը, եւ Ասի-  
ութ մեծ քաղաքին եօթը դուռերէն մէկը  
կը կոչուէր ՊԱՊ ԷԼ ԱՐՄԷՆ, Հայերու դուռը :

Շինառայի մէջ, Փաշն քաղաքի մօտ, Նե-  
ղոսի արեւմտեան եղերքը կային եօթը Հայ  
Եկեղեցիներ, շատ բարեկարգ վիճակի մէջ :

Գալուստանա կերկէի նահանգին մէջ, կար  
Հայ Եկեղեցի մը, որու ճիշտ տեղը հաւա-  
նականաբար անծանօթ չէ ներհուն պատմա-  
գէտներուն :

Չենք կրնար ըսել թէ Փաթիմեաներու  
օրով ասոնցմէ դուրս ուրիշ Հայ վանքեր եւ  
Եկեղեցիներ չկային Եգիպտոսի մէջ, սակայն  
պէտք չէ ենթադրել թէ այդ նուիրական հաս-  
տատութեանց ամենն ալ անոնց օրովը շինուե-  
ցան. ընդհակառակը, պատմութեան մէջ կան  
այնպիսի նշաններ, որոնցմէ կրնանք հետևցնել

Թէ Ֆաթիմեաններու ժամանակէն առաջ ալ՝  
Եգիպտոսի մէջ կային Եկեղեցիներ և վանքեր,  
ուր կը պահուէին բազմաթիւ ձեռագիրներ,  
այնպէս որ 1169 ին երբ Եգիպտոսի Հայ Եկե-  
ղեցականներու պետը, որ Պատրիարք տիտղոսով  
Եպիսկոպոս մ'էր, ստիպուեցաւ իր հօտը թո-  
ղուլ եւ Երուսաղէմ ապաստանիլ, հետը տա-  
րաւ եօթանասունը շորս ձեռագիր Աստուա-  
ծաշունչ եւ մէկ Աւետարան, որ արուեստա-  
կան նուրբ ճաշակով յօրինուած էր :



ՀԱՅԵՐՆ ԷՅՈՒՊԵԱՆՆԵՐՈՒ ԵՒ ՄԷՍԼՈՒՔՆԵՐՈՒ ՕՐՈՎ

1171—1516 (Ք. Ե.)

Հազար հարիւր վաթսուն եւ ինը տարին ուրիշ տեսակէտներով ալ դժբաղդութեան եւ աղէտներու թուական մը եղաւ Հայոց համար. տարիներէ ի վեր Հայ վէզիրները անհետացած էին եւ հետեւաբար Փաթիմեան տունը, զրկուած իր ամենահզօր ներուկէն, կորանցուցած էր արդէն ազդեցութիւնը եւ կորանցունելու վրայ էր իր Գահը, ինչոր պատահեցաւ երեք տարի յետոյ, 1171ին եւ Էյուպեանները գրաւեցին Եգիպտոսի իշխանութիւնը: Հայ մեծամեծներն առանց բացառութեան երկրէն դուրս վտարուեցան, մնացած Հայերը խիտ հալածանաց ենթարկուեցան, շատերն օտար երկիրներ գաղթեցին և մէկ մասն ալ տեղական տարրին հետ ձուլուեցաւ. քիչեր՝ միայն զգացմամբ և սրտով Հայ մնացին, այն ալ կարծենք ոչ յայտնապէս. իրենց եկեղեցիներն ու վանքերն օտար ազգերէ գրաւուեցան և կամ խուժանին կատաղութեան զոհ-

ուելով քանդուեցան, մէկ քանին ալ ի՛նչ ըլ-  
լալը յիշուած չէ պատմութեան մէջ. նոյն իսկ  
Եգիպտահայ Աբուսահլ լուռ է այս մասին<sup>(\*)</sup>։

Կիլիկիոյ Հայոց Թագաւորն և Կաթուղի-  
կոսն Եպիսկոպոս մը զըկեցին Եգիպտոս, Այ-  
դեստանի և Զուհրիի Եկեղեցիները նորէն ձեռք  
անցնելու համար, բայց կարելի չեղաւ բան  
մը ընել և Եպիսկոպոսն ալ սրտին ցաւէն  
վախճանեցաւ և թաղուեցաւ ի Գահիրէ ։

Էյուպեանները 79 տարի Եգիպտոսի գա-  
հուն վրայ հաստատուն մնալէ յետոյ՝ 1250 ին  
տեղի տուին Մէմլուքներուն, ասոնց օրովն ո՛չ  
միայն Եգիպտոսի Հայերուն վիճակը աւելի  
ծանրացաւ այլ և Եգիպտացիներն սկսան հա-  
յածել Հայերը նոյն իսկ Կիլիկիոյ մէջ, ուր  
Հայկական Թագաւորութիւն մը կանգուն էր  
1080 էն ի վեր ։ Փրնտուխդար Սուլթանը,  
1265ին առաջին անգամ յարձակեցաւ ի Կի-  
լիկիա, Հայերը թէև յանկարծակիի եկան,  
բայց կռուեցան և մեծ կոտորածի պատճառ

---

(\*) Այս պատմիչն ապրած է 12րդ դարուն  
վերջերը և իր արարերէն գիրքը 1895ին անգ-  
ղիերէնի թարգմանուած և ճոխ ծանօթութիւն-  
ներով տպագրուած է Օքսֆորտի մէջ ։

եղան, բայց ի վերջոյ Հայոց Հեթում Թագաւորին Լեւոն անուն զաւակը գերի բռնուեցաւ և Եգիպտոս բերուեցաւ : Լեւոն շղթայակապ վիճակի մէջ Եգիպտոսէն Երուսաղեմ երթևեկեց ուխտի համար : Հեթում 32 ամիս յետոյ, Կիլիկիա վերադարձուց Լեւոնը, փրկանք տուով Հալէպ քաղաքը, և Թաթարներու ձեռք գերի դռնուած Սօքօր Եգիպտոսի զօրապետը ազատել տալով :

Փետուխտար 1274ին հակառակ իր երգման, որ ըրած էր Հայոց բարեկամ մնալու համար, դարձեալ յարձակեցաւ Կիլիկիոյ վրայ . արիւնահեղ կռուներէ յետոյ՝ առաւ Տարսոն մայրաքաղաքն և 10,000 հոգի գերի բերաւ Եգիպտոս : Երկու տարի ետքը Փետուխտար նորոգեց պատերազմը Հայերուն դէմ, բայց այժմ անգամ չարաչար յաղթուեցաւ անոնց թագաւորէն, որ վերոյիշեալ Լեւոնն էր : Եգիպտոսի զօրքերէն տասնեակ հազարներով ինկան պատերազմին մէջ ու ողջ մնացողները փախան՝ թողլով ճոխ աւար՝ յաղթական Հայերուն ձեռքը : Փետուխտար ինքն ալ, կռուի ատեն ստացած վէրքէն քիչ յետոյ մեռաւ Դամասկոսի մէջ :

Քանի մը տարի յետոյ Եգիպտացիները

նորէն արշաւեցին Կիլիկիա, տիրեցին Հռոմ-  
կլայ քաղաքին, քանդեցին Կաթողիկոսարանն  
ու եկեղեցին կողոպտեցին, սրբազան անօթներ-  
ըը և Լուսաւորչի աջը և ժողովրդին մէկ մա-  
սը Ստեփան Կաթողիկոսին հետ գերի բերին  
Եգիպտոս: Սոյն միջոցին Եգիպտոս համա-  
ճարակ մեծ հիւանդութիւն մը ծագեցաւ,  
Սուլթանն այս բանն իր ի Հռոմկլայ ըրածներուն  
վերագրելով՝ տարի մը ետքն անօթներն և Ս.  
աջը Հայերուն ետ դարցուց և բոլոր դերինե-  
րը ազատ արձակեց: Կաթողիկոսը, զգայած  
դառն յիշտէն օտարութեան մէջ մեռաւ. իսկ  
միւսները իրենց տեղերը վերագարձան:

Եգիպտոսի հայերը մինչև 1311, Կիլի-  
կիա նստող ընդհանրական հայրապետին հո-  
գեւոր իրաւասութեան տակն էին. այդ թը-  
ւականին Երուսաղէմի Սարգիս Պատրիարքը  
Կոստանդին Կաթողիկոսին և Օշին թագաւորին  
լատինաւոր ընթացքէն դժգոհ, դիմեց Եգիպ-  
տոսի Սուլթան Մէլէք Նասրին և անկէ հրո-  
վարտակ առաւ ինքնագլուխ վարելու իր Պատ-  
րիարքական իշխանութիւնը, իրաւասութիւն  
ունենալով նաև Եգիպտոսի հայերուն վրայ:


Չանց կ'ընենք մի ս.ս. մի թուել այն պա-  
տերազմները, որ Եգիպտոս ու Կիլիկիա իրա-

րու դէմ մղեցին դեռ երկար ատեն և որ  
Եգիպտոս կուղէր յաճախ նորոգել, տեսնելով  
որ Կիլիկիոյ Հայոց թագաւորներն արեւմտեան  
արքունիքներու և աղգերու հետ իրենց յարա-  
բերութիւնները կը շարունակէին միշտ. այդ  
միջոցին Կիլիկիայի մերձն և շուրջը գտնուող  
իշխաններուն ամէնն ալ, Եգիպտոսի Սուլթան-  
ներուն պէս իսլամ էին, և կը մտածէին յանի-  
րաւի թէ Հայերուն սիրուն համար է որ Եւ-  
րոպացիները զէնք կը վերցունէին իրենց դէմ.  
ուստի բոլորը մէկտեղ դաշնակցեցան Կիլիկիոյ  
Հայկական գահը կործանելու և երկիրն այն-  
պիսի աղէտներու մատնելու որ անկէ յետոյ  
Հայոց անհնարին ըլլայ իրենց թագաւորու-  
թիւնը վերականգնելու :

Դաշնակից բանակներուն 1321. 2 ին յար-  
ձակումն ի Կիլիկիոյ բարեբախտաբար իր նալա-  
տակին շահանիր, դաշնակիցները կ'ստիպուին  
հաշտութիւն խնդրելու և Հայոց Կաթողիկոսը,  
Կոստանդին Գ. Լամբրոնացի, անձամբ Գահիրէ  
կուգայ և Եգիպտոսի Սուլթանին հետ կը կռէ  
դաշինքը, որու գլխաւոր հիմերն էին՝

1. Հայերը տարին 50000 Ֆիօրին տուրք  
տան Եգիպտոսի,

2. Մեծահռչակ Այասի մարտատան հա-



սոյթին կէսն Եգիպտոսի դանձուն զրկուի :

Սուլթանն ալ իր կողմէ յանձն կ'առնէր՝

1. Կիլիկիայի մէջ բերդ կամ ամրոց չգրաւել իր զօրքով ,

2. Այասն և ուրիշ կործանած բերդերը իր ծախքով նորոգել :

Եգիպտացիներու արշաւանքնէրը դէպի Կիլիկիա ուրիշ անգամներ ալ կրկնուեցան և Հայերը չկրցան պէտք եղած կերպով պաշտպանել իրենք զիրենք , երկպառակուած կրօնական փրցուն վէճերով , որոնք շուրջ երկու դարէ ի վեր առատ խոստումներով և սնոտի յոյսերով գլխաւորաբար Վատիկանէն կ'արծարծուէին՝ Հայ Ազգը Կաթողիկ ընելու դիտումով :

Հայ Ազգը Կաթողիկ չեղաւ . բայց այդ վէճերուն խոստումներուն և յոյսերուն անխուսափելի հետեւանքն եղաւ , աւանդ , Եգիպտացիներու կողմէ Հայոց Կիլիկիոյ թագաւորութեան կործանումը , որ պատահեցաւ Լուսինեան Լեւոն Զ . թագաւորին օրով , 1375 ին : Լեւոն Կապանի կամ Սիսի ամուր բերդին մէջ ինն ամիս պաշարուած մնաց և Եգիպտոսի զօրապետէն իրեններուն հետ ազատ արձակուելու խոստումն առնելէ յետոյ անձնատուր եղաւ . բայց զօրապետը չբռնեց իր խոստումը ,



Լեւոնը շղթայի զարնելով նախ Երուսաղէմ ու  
ետքը Գահիրէ զրկեց ընտանիքին հետ, հոն  
կրօնքն ուրանալու պայմանաւ աղատութիւն  
առաջարկուեցաւ իրեն. Լեւոն չընդունեց, հե-  
տեւաբար եօթը տարի Մարիամ Թագուհին  
և Փէննա աղջկան հետ բանտ մնալէ յետոյ՝  
կաստիլիոյ Յովհաննէս և Սրակոնի Պետրոս  
Թագաւորներուն Եգիպտոսի Սուլթան Ահմէտի  
մօտ յիշանձն միջնորդութեան շնորհիւ, 1382  
Սեպտ. 30ին աղատ արձակուեցաւ իրեններուն  
հետ :


Անդողակի և այրած սրտով ըսենք թէ կիլի-  
կիոյ Թագաւորութիւնը վերականգնելու համար  
Լեւոնի Եւրոպայի մէջ ըրած ճիգերն ապարդիւն  
սպառեցան և ինք՝ յուսահատելով վախճանեցաւ  
և թաղուեցաւ Փարիզ 1393ին : Իր թագու-  
հին (\*) և աղջիկն ալ Երուսաղէմ գացին եւ  
Հայոց Ս. Յակոբեանց վանքը մտան :

Անտարակոյս է յուպեաններու և Մէմլուք-

---

(\*) Ուրիշ գրուցի մը նայելով Մարիամ Թա-  
գուհին Լեւոնի մերձաւոր ազգականն էր և ոչ թէ  
կինը : Լեւոնի կինը Մարգարիտա կը կոչուէր եւ  
անոր գերութեան ժամանակ մեռած էր Գահիրէ  
ու թաղուած Ս. Մարտիրոս եկեղեցիին մէջ :

Ներսէս տիրապետութեանց շրջանին ալ Հայերն  
առեւտրական յարաբերութիւնը կը շարունա-  
կէին Եգիպտոսի հետ, ուր հինէն ի վեր շատ  
յարգի էին կիլիկիոյ փայտն ու երկաթը ։



Դ.

ՀԱՅԵՐԸ Բ. ԴՌՆԷՆ ՂՐԿՈՒԱԾ ԿՈՒՍԱԿԱԼՆԵՐՈՒՆ ՕՐՈՎ

ԵՒ ՖՐԱՆՍԱԿԱՆ ԱՐՇԱԻԱՆՔԻՆ ԺԱՄԱՆԱԿ

(1517—1801 ք. Ե.)

Օսմանեան կայսերական տան վեհապետներէն Սուլթան Սէլիմ Ա. երկարատեւ պատերազմներէ յետոյ՝ Մէմլուք-Չէրքէզներու վերջին երկու թագաւորներուն յաղթեց, անոնց ցեղին իշխանութեան վերջ տուաւ 1517ին և Օսմանեան ընդարձակ կայսրութեան կցեց Եգիպտոսն, որ սկսաւ կառավարուիլ Բ. Դրունէն ղրկուած կուսակալներու ձեռքով:

Պատմութեան այս շրջանին՝ Գահիրէի Հարէթ-էլ-Չուէլա թաղին մէջ՝ Խպտիններու եկեղեցիի մը վերելը՝ կառուցուած է Ս. Սարգիս եկեղեցին, որուն յիշատակարանն Եգիպտոսի ծանօթ հայ յիշատակարաններուն ամենէն հինն ըլլալուն համար, կ'արժէ արտագրել այս տեղ.

Շնորհիւ Տեառն Ասուծոյ եւ ողորմութեամբ Նորուն նորակերտայ ի հիմանէ շինեցաւ Ս. Սարգիս անուն եկեղեցիս արդեամբք եւ ջանիւք ինքնին միայն Տարպիանէնի Այվազ սղա կոչեցեայ Վահան

աղային, որ բազում աշխատանքով պայծառակերտաց գաւ ի փառս Ասուծոյ եւ ի յօգուտ հաւասարեցող, յամի Փրկչին 1749 սկիզբն, իսկ ի մերս ՌՃՂԸ, արդ խնդրի հարկիւ ի վայելողաց գերախօսիս բարեպաշտութեան սորա ոչ մոռանալով յիշել առ Տէր զծնողս սորին ընդ իւր, զՏէր Ամբակում պապն եւ զՔրիզոստոմոս զհայրն եւ զմահեստի Թատիսի մայրն եւ զմահեստի Հովսիսիմէ կենակիցն եւ զհանի Յակոբեան որդեակն եւ զհանի Աննա դուստրն եւ դուք յիշեալ յիշիք ի Տէր :

Ա.յս յիշատակարանին մէջ «Նորակերտեալ ի հիմանէ շինեցաւ» բառերուն իմաստը շատ պայծառ չերեւիր մեզ և ենթադրել կուտան թէ 1749էն առաջ ալ այդտեղ Հայոց եկեղեցի կար և բարեպաշտ վահան աղա, հաւանականաբար ակնցի, ոչ թէ շինած, այլ վերաշինած է զայն (\*):

---

(\*) Իր շինութեան կամ վերաշինութեան ժամանակէն սկսեալ մինչև հիմակուան Ս. Աստուածածին եկեղեցւոյ կառուցման թուականը (1831), Ս. Սարգիս եկեղեցւոյ մէջ ամէն օր հոգեւոր պաշտամունք կը կատարուէր և այդ թուականէն ետքն ալ իբր քառօրդ դար մը, Ս. Սարգսի տօնի օրերը պատարագ կը մատուցուէր հոն : Անկէ յետոյ անօթները, պատկերները, մարմարեայ յիշատա-

ԺԸ. դարուն վերջերը, Մուրատ Պէյ, ծագումով կովկասահայ եւ յետոյ իսլամացած՝ փարաւոններու երկրին մէջ կը տեսնուի գըլուխ Մէմլուքներու. Մուրատ պէյ անուանի զօրավար և գրեթէ ամենայն ինչ էր Եգիպտոսի մէջ, թէեւ երկիրն Յամանեան տիրապետութեան տակ կը գտնուէր եւ անուանական կուսակալ մըն ալ կար հոն: Մուրատ Պէյի նպատակն էր Եգիպտոսի գահուն տիրել, իրեն կ'օժանդակէր ժողէֆ Ամօրի Եուսուֆ Նար պէյ ( Լուսինեան ), որուն Մուրատ Պէյ Սաթենիկ անուն գեղանի քեռդուստրը կ'ու-

---

կարան և ին. փոխադրուած են Ս. Աստուածածին եկեղեցւոյ շրջափակին մէջ:

Ցաւալի է որ Խպտիները տարիներ առաջ Ս. Սարգիս եկեղեցին՝ ներքեւի իրենց սեպհական եկեղեցիին հետ՝ քանդած ու տեղը վանք մը շինած են՝ առանց տակաւին փոխարինութիւն մը ընելու Հայերուն:

Հաննա պատմագիր և ուրիշ աղբիւրներ կը հաւաստեն թէ Հայերը Գահիրէի Ս. Սարգիս եկեղեցիին փոխարէն Երուսաղէմի մէջ մեծ զոհողութիւն ըրած են ժամանակին՝ Խպտիներուն թողլով Հայերու սեպհական խորան մը, Քրիստոսի Սուրբ Գերեզմանին կից:

Թեան տուած էր : Պօնաբարդի Եգիպտոս ար-  
շաւանքը վերջ տուաւ երազներուն Մուրատ  
Պէյի, որ յաղթուեցաւ անկէ և ապաստանե-  
ցաւ վերին Եգիպտոս . Պօնաբարդի զանի գերի  
բռնելու ջանքերն ու հնարքները չյաջողեցան  
և Մուրատ Պէյ քանի մը տարի յետոյ հաշ-  
տուեցաւ Փրանսացւոց հետ, Գահիրէ վերա-  
դարձաւ և հոն մեռաւ : Իսկ Եուսուֆ Նարպէյ  
Մէմլուքներու մոլեռանդութեան զոհ գնաց  
1800 Յունիս 14ին : Ասոր զաւակը՝ Գէորգ  
Գալֆա, հաւատարիմ ծառաներու շնորհիւ ա-  
զատեցաւ, Պոլիս ապաստանեցաւ և ամուսնա-  
նալով եղաւ Խորէն Արքեպիսկոպոս Նար-  
պէյի հայրը :



Ե.

ՀԱՅԵՐԸ ՄՈՒՀԱՄՍԷՏ ԱԼԻՒՍՈՐՈՎ

ԺԹ. ԴԱՐՈՒ ՍԿԻՋԲԷՆ ՄԻՆՁԵՒ ՄԵՐ ՕՐԵՐԸ

ԺԹ. դարուն սկիզբը մեծանուն Մուհամմէտ Ալի, բնիկ Գավալացի, Օսմանեան վեհապետութեան ներքեւ Եգիպտոսի մէջ կը հիմնէր իր իշխանական տունը, մեծ և նոր թուական մը բանալով ինչպէս այդ երկրին ամբողջ բնակչութեան համար ընդհանրապէս, նոյնպէս Հայոց համար մասնաւորապէս: Հայերը Ֆաթիմեաններու ժամանակի վերադարձը տեսան իրենց համար: Անոնք, նորահաստատ և լուսամիտ կառավարութեան հովանիին տակ աճեցան, նիւթապէս ու բարոյապէս զարգացան ու ելան իրենց մէջէն տիեզերահռչակ քաղաքագէտներ, դիւանագէտներ, վերանորոգիչներ և կազմակերպիչներ, որոնք Մուհամմէտ Ալիի և անոր յաջորդներուն աջ բազուկը եղան:

Ասոնցմէ նախարար և նախարարապետ եղողներուն գործերն համառօտիւ կ'ամփոփենք այս անձուկ էջերուն մէջ:

Պօղոս պէյ Եուսուֆեան, բնիկ Իզմիրցի,

լեզուագէտ, մեծահանճար քաղաքագէտ, մեծ վերանորոգիչ եղաւ արտաքին գործոց և առեւտրական նախարար 1824—44 . Բայց պատմութիւնը մեծաբարբառ կը վկայէ թէ Պօղոս Պէյի գործունէութիւնը նախարարի մը պարզ պաշտօնին մէջ չէր սահմանափակուեր, այլ իրականին մէջ նախարարապետի մը իրաւասութիւններն ունէր, միեւնոյն ժամանակ ըլլալով պետական գանձուն տեսուչն և մեծ փաշային ներքին քարտուղարն և խորհրդականը :

Շատ տալգնապալից ու ծանրակշիռ պարագաներու մէջ Պօղոս Պէյ Մուհամմէտ Ալիի ցոյց տուած է կատարեալ անձնուիրութիւն եւ մեծ իմաստութիւն ու փորձառութիւն, այս պատճառով փաշան անսահման վստահութիւն ունէր անոր վրայ, այնպէս որ 1839ին երբ Սուտան կը ճամբորդէր շատ մը հրովարտակներ սորագրած և պարապ վիճակի մէջ (blanc-seing) յանձնած է Պօղոս Պէյի, ի հարկին ուղածին պէս գործածելու համար զանոնք . վստահութեան ասկէ աւելի փայլուն և աւելի պերճախօս ապացոյց մը երեւակայել կարելի չէ : Ինչպէս կը գրէ պատմիչ մը . Պօղոս Պէյ օ-



տար հիւպատոսներու, մինչև իսկ Մուհամմէտ Ալիի զաւակներուն և թոռներուն ակնածելի էր, իր շնորհիւ Եգիպտոսի անապատները շէնցան, խոպան տեղերը պարարտացան, արուեստները ծաղկեցան, գիտութիւնը զարգացաւ, հարստութիւնը շատցաւ, եկամուտները բազմապատկուեցան, և Մուհամմէտ Ալիի իշխանութիւնը զօրացաւ ու ընդարձակուեցաւ, ուստի սկսաւ թագաւորի պէս հրամայել եւ տիրել և իր իշխանութեան ներքեւ կարգել զօրապետներ, սպարապետներ ու փաշաներ :

Մուհամմէտ Ալիի և Պօղոս պէյի համար 1840 և 1841 տարիները շատ նշանաւոր եւ յուզումնալից եղան :

Սուլթան Մահմուտի և Մուհամմէտ Ալիի միջեւ պատերազմը նորոգուած էր և Եգիպտոսի յաղթական բանակը՝ թուրքիոյ շատ մը քաղաքները գրաւելէ ետքը՝ Պրուսա հասած էր և Պոլսոյ կ'սպառնար. սակայն Անգղիոյ, Աւստրիոյ, Բրուսիոյ և Ռուսիոյ կառավարութիւններն ի նպաստ Սուլթանին կը միջամտէին եւ Մուհամմէտ Ալիի կ'ընէին այնպիսի առաջարկներ, որ անի իր յաղթականի դիրքին ու յոյսերուն համապատասխան չէր գրտնէր : Մ. Ալի զայրոյթով կը մերժէր եղած ա-

աւջարկները և կուզէր պատերազմը շարունակել, առանց ի նկատի առնելու թէ այս անգամ իր դէմ պիտի գտնէր ոչ միայն Օսմանեան զուեղերն այլ և յիշեալ չորս տէրութեանց ցամաքային ու ծովային միացեալ ոյժերն, որոնք կարող էին խապառ խորտակել իր զօրութիւնն և մինչեւ անգամ Եգիպտոսէն հեռացնել զինքը: Պատերազմին շարունակութիւնն անվրէպ կերպով ազիտաբեր պիտի ըլլար Մ. Ալիի եւ իր Տան համար: Այս ճգնաժամային ու գերագոյն վայրկենին՝ Պօղոս պէյ Եուսուֆ վերջապէս կը յաջողի համոզել Մ. Ալին՝ ընդունելու տէրութեանց առաջարկները: Եւ Սուլթան Մէճիտ 1841 Փետրուար 13ին (20 Զիլգատէ 1256) կայսերական հրովարտակով Մուհամմէտ Ալին Եգիպտոսի կուսակալութեան պաշտօնին մէջ կը վերահաստատէ: Այդ նշանաւոր հրովարտակը, իբր հետեւանք Պօղոս Պէյի ջանքերուն և չորս տէրութեանց թելադրութիւններուն՝ առաջին անգամ ըլլալով կը պարունակէր սա՛՛ srամադրութիւնը թէ Եգիպտոսի կուսակալութիւնը ժառանգական է Մուհամմէտ Ալիի սան համար:

Եւ ահա այսպէս, Պօղոս Պէյի հեռատես

իմաստութեան շնորհիւ՝ այդ փառաւոր տան  
իշխանութիւնը միջազգային հաւանութեամբ  
ամուր և օրինական կռուանի վրայ կը հաս-  
տատուէր և հայազգի պետական մարդը Մու-  
համէտ Ալիի և յաջորդներուն ամենամեծ ծա-  
ռայութիւն մը կը մատուցանէր :

Պօղոս Պէյ Եուսուֆեան քանի բարձրանար  
կառավարական պաշտօններու մէջ, այնքան  
կը յարէր ու կը փարէր իր ազգին ու Եկե-  
ղեցիին :

Իր շնորհիւն է որ Եգիպտական կառավա-  
րութիւնը զանազան սուանձնաշնորհումներ  
տուած է նախ Հայոց Առաջնորդարանին ու  
յետոյ ուրիշ Առաջնորդարաններու : Այդ ա-  
ռանձնաշնորհումներէն մէկ քանին երկ-  
րին հետզհետէ զգեցած վարչական ու դա-  
տական նորանոր կազմակերպութեանց բերմամբ  
ջնջուած են ետքէն, բայց մէկ քանին ալ,  
ամէնէն կարեւորները՝ վախճանեալ Հայերու  
ժառանգութիւններն Առաջնորդարանի միջո-  
ցաւ կարգադրելու և անչափահասներու ու  
խելագարներու շահերու պաշտպանութեան  
համար խնամակալ կարգելու իրաւասութիւն-  
ները, մինչեւ այսօր կը շարունակուին :

Պօղոս Պէյ Եուսուֆի նախանձորդները

1844ին Մ. Ալի փաշան համոզեցին աւստրիացի պաշտօնեայ մը նշանակելու պետական ելեւմուտքին քննութեան համար :

Մեծահոգի և մեծսիրտ փաշան այս անուանումն ըրաւ պարզապէս դիւրացնելու մտօք Պօղոս Պէյի գործն և փոյթ չըրաւ անոր կարծիքն առնելու նախապէս : Սակայն Պօղոս Պէյ որ քաջ տիղեակ էր թելադրիչներու շար նրպատակին , իր արժանապատուութեան մէջ խորապէս վիրաւորուեցաւ և ամէն գործէ քաշուելով մեկուսացաւ Աղէքսանդրիոյ իր բնակարանը , հաստատապէս որոշելով սնունդ չառնել և մեռնիլ խաղաղիկ :

Մուհամմէտ Ալի Գահիրէէն կ'իմանայ եղելութիւնը և բարձրաստիճան պաշտօնատար մը յատկապէս կը զրկէ Պօղոս Պէյին և կը հրամայէ որ սնունդ առնէ երկարելու համար իր շատ թանկագին կենաց թելը :

Պօղոս Պէյ կը հնազանդի և սուրհանդակին ներկայութեան քիչ մը բան կ'ուտէ և կը խմէ , սակայն ներքին գործարաններն անսրլաղութեան պատճառաւ վնասուած ըլլալով օգուտ չընեղ և 1844 Յունուար ամսուն 75 տարեկան հասակին մէջ կը վախճանի :

Պօղոս Պէյի մարմինը իր պետական ամե-

Նարարձր պաշտօնատարի դիրքին անհամապատասխան շքով կը թաղուի տեղւոյն Հայոց եկեղեցւոյ պարտէզին մէջ : Մուհամմէտ Ալի կը լսէ և կը զայրանայ ու Աղէքսանդրիոյ կառավարչին յանդիմանական խիստ նամակ մը կը գրէ , և ի մէջ այլոց կ'ըսէ . « Քեզի կը հրամայեմ , ապիրատ , որ գերեզմանէն հանես մարմինն այն մարդուն որ քենէ հարիւր անգամ աւելի կ'արժէ , եւ զանի նորէն թաղես բոլոր այն պատիւներով , որ պարտական ենք այն մարդուն , զոր կը սիրէի » :

Երկրորդ անգամ ըլլալով Պօղոս Պէյի համար յուղարկաւորութիւն տեղի կ'ունենայ . այդ հանդէսը շատ մեծաշուք կ'ըլլայ , նոյն իսկ Մուհամմէտ Ալի ներկայ կը գտնուի անձամբ և ծախքը պետական գանձէն կը հոգայուի :

Քահիրէի Արժանայիշատակ Տ. Կարապետ Ա. քէն . , որ այդ յուղարկաւորութեան ներկայ գտնուողներէն մին եղած է , կը պատմէր մեզ թէ ժամանակին առաջնորդը կրօնքի հակառակ նկատելով , Պօղոս Պէյի մարմինը գերեզմանէն հանել չի տուաւ , այլ երկրորդ յուղարկաւորութեան ատեն մէջը պարապ դադար մը պատճնել տուաւ համբաւելով թէ Պօղոս Պէյի



մարմինը պարունակող դագաղն է (\*):

Եգիպտոսի արտաքին դործերու և վաճառականութեան նախարարի պաշտօնին մէջ Պօղոս Պէյ Եուսուֆի անմիջական յաջորդն եղաւ հայազգի Արթին Պէյ Զրաքեան, որ արդէն պետական զանազան բարձր պաշտօններու մէջ իր մեծ արժանիքն ու կարողութիւնը ցուցուցած էր. մասնաւորապէս յիշատակութեան արժանի է կառավարական Արաքերէն ու Թուրքերէն պաշտօնագրերու երկարախօս և խառնակ ոճը կարճեցնելու ու պայծառացնելու գործը, որու համար թէեւ շատ արգելքներու բաղխեցաւ Արթին Պէյ, բայց Մուհամմէտ Ալիի պաշտպանութեան շնորհիւ

---

(\*) Աղէքսանդրիոյ Հայոց Ս. Եկեղեցւոյ պարտէզին մէջ կը բարձրանայ Պօղոս Պէյի շքեղ դամբարանն, Նուպարեան գերդաստանի դամբարանին մօտիկ. Սակայն Ա. Պէրպէրեան իր Պատմութեան մէջ և Ն. Ճիվանեան իր Յատուկ Անուանց Առձեռն Բառարանին մէջ, չենք գիտեր ի՞նչ պատճառաւ կը գրեն թէ Պօղոս Պէյի մարմինն իր ազգականներու խնդրանքով և Մուհամմէտ Ալիի հրամանով Իզմիրի Ազգային Գերեզմանատունը փոխադրուած է Ետքէն:

ստանձնեց այդ գործն և կատարեց մեծ յա-  
ջողութեամբ :

Արթին Պէյ 1848ին Մուհամմէտ Ալիի ըն-  
կերացաւ Եւրոպա, ուրկէ փոխարքան վերա-  
դարձաւ դժբաղդարար մելամաղձոտ վիճակի  
մէջ :

Արթին Պէյ 1849ին պետական գործով մը  
Պոլիս գտնուած ժամանակ՝ ստացաւ Պալայի  
աստիճանը, որ այն ատեն քրիստոնէի մը շը-  
նորհուած բարձրագոյն աստիճանն էր :

Երբ 1850ին Ապպաս փաշան փոխարքայ  
էր, Արթին Պէյ ստիպուեցաւ թողուլ իր  
պաշտօնն ու Եգիպտոսն եւ ապաստանիլ Պո-  
լիս՝ Սամի, Շէրիֆ և Գանի փաշաներուն, Մու-  
համմէտ Ալիի ծառայող ուրիշ մեծ անձնաւո-  
րութիւններու և փոխարքայական գերդաս-  
տանին պատկանող մէկ քանի իշխաններու հետ :

Զորս տարի յետոյ, երբ Սայիտ փաշան  
փոխարքայական գահը բարձրացաւ, Եգիպտոս  
կանչեց Արթին պէյն և ուղեց նորէն արտա-  
քին գործոց և վաճառականութեան նախարար  
ընել զինքը : Արթին Պէյ սակայն նկատելով  
որ գործելու կատարեալ ազատութիւն չպիտի  
ունենայ այլեւս, չընդունեց այդ պաշտօնը և  
անպաշտօն նախարար ու փոխարքային մտե-  
րիմ խորհրդականն եղաւ :



Այս ատենն էր որ Պ, տը Լէսէփա կ'աշխատէր Սուէդի ջրանցքի բացման հրամանը ձեռք բերել Սայիտ փաշայէն: Արթին Պէյ՝ փոխարքային եղբորորդի Մուսթաֆա Ֆաղըլ փաշայի հետ իր բոլոր ուժովը հակառակեցաւ այդ հրամանը տրուելուն. բայց Պ. տը Լէսէփա՝ Նարուէոն Գ. կայսեր հղօր պաշտպանութեան շնորհիւ յազթանակեց, և Արթին Պէյ և Ֆաղըլ փաշա, փոխարքային պաշտօնական հրամանով, թողուցին Եգիպտոսը 1857ին թէև յետոյ երկուքն ալ կանչուեցան, բայց ջրանցքին խնդիրը, նոյն իսկ Բարձրագոյն Դրան կամքին հակառակ, կարգադրուած, լրմնցած էր այլեւս:

Արթին Պէյ 1859ին վախճանեցաւ ի Գահիրէ (\*):

---

(\*) Արթին Պէյ Հասթէական հասարակութեան կը պատկանէր, բայց ազատամիտ էր և սիրող Հայ Եկեղեցւոյ ծէսերուն: Կը պատմեն թէ Լատինական Մնունդի օր մը իր տան պատուհանէն կը դիտէ որ խումբ մը երեւելի ազգայիններ իր բնակարանը կուգային: Սպասաւորին միջոցաւ լուր կը դրկէ անոնց որ եթէ գործի համար է իրենց այցելութիւնը, թող հրամանն, իսկ եթէ Մնունդի

Արթին Պէյ թողած է զինուորութեան արուեստին և վարչութեան վրայ ճառող թուրքերէն և ֆրանսերէն գլխեր, հեղինակութիւն կամ թարգմանութիւն, ամէն ալ տպագրւած Պուլաղի տպարանին մէջ, թէև առանց հեղինակին կամ թարգմանիչին անունին :

Արթին Պէյ իբրև անձնական փորձառութեան արդիւնք շատ անգամ կ'ըսէ եղեր . « Պէտք չէ ունենալ կ . Պուլսոյ մէջ տուն , Սեւ Մովի վրայ նաև և Եգիպտոսի մէջ բարեկամ » :

Արթին Պէյէն ետքն՝ Առաքել Պէյ Նուպար , Նուպար փաշայի երէց եղբայրը , քանի մը տարիներ եղած է առեւտրական նախարար և ցոյց տուած է մեծ կարողութիւն և արդիւնք . սակայն ի վերջոյ այս նախարարութիւնը ձգելու ստիպուած է , ու զանազան կարեւոր պաշտօններ վարելէ յետոյ՝ եղած է Սուտանի ընդհանուր կառավարիչ : Իր մարմինը թաղուած է Աղէքւանդրիա :

Պօղոս , Արթին և Առաքել Պէյերը դեռ

---

առթիւ է , ինք Հայ ըլլալով Լատինաց Մնունդի օրը շնորհաւորութիւն չընդունիր և կը խնդրէ որ Հայերու Մնունդի օրը գան իրեն : Այնպէս ալ կ'ըլլայ :

ողջ էին, երբ Եւրոպայէն Եգիպտոս կուգար Սիւնեաց աշխարհի նշանաւոր տոհմի մը շառաւիղ Իշմիրցի Նուպար Նուպարեան, ըստ հրաւերի Պօղոս Պէյի, որու քրոջ զաւակն էր, տասնեւհինգ տարեկան և ամենափայլուն կերպով դեռ նոր աւարտած դպրոցական կենաց շրջանը:

Նուպար Եգիպտոս գալէն 2—3 տարի ետքը՝ Արտաքին գործոց նախարարութեան թարգմանիչներու դիւանին մէջ պաշտօնի կը կոչուի:

Կը տեսնենք զինքը 1848ին քարտուղար-թարգմանի պաշտօնով ընկերացած Իպրահիմ փաշայի՝ Փարիզ և Պոլիս:

Իպրահիմ փաշայի յաջորդն Ապպաս փաշա կը պահէ Նուպարն անձնական քարտուղարի պաշտօնին մէջ և կը շնորհէ անոր Էժէնսի տիտղոսը. քանիցս կը զրկէ զայն Եւրոպա՝ դիւանագիտական կարեւոր պաշտօններով, զորս մեծ յաջողութեամբ գլուխ կը հանէ Նուպար, հակառակ իր երիտասարդ հասակին:

Ապպաս փաշայի յաջորդը Սայիտ փաշա, Մուհամմէտ Ալի փաշայի որդին, Նուպարը անձնական քարտուղարի պաշտօնին մէջ ժամանակ մը պահելէ յետո, Պէյութեան տիտ-

դոսով երկաթուղւոյ ընդհանուր տնօրէն կը կարգէ զայն : Նուպար իր այս պաշտօնավարութեան օրով շինել տուած է Գահիրէ-Սուէզ երկաթուղւոյ ուղղակի գիծն , որ այն ատեն Հնդկաստանի ճամբան էր և որ , երբ ետքէն բացուեցաւ Բօրսայիտ Սուէզ ջրանցքը , կորնցուց իր կարեւորութիւնը ու խափանուեցաւ :

Սայիտ փաշա 1862ին պաշտօն յանձնեց Նուպարի՝ որ Եգիպտական առաջին փոխառութիւնը կնքելու համար բանակցութիւններ կատարէ Եւրոպայի մէջ : Նուպար յաջողութեամբ գլուխ հանեց այս պաշտօնն՝ անգլիական առաջարկին վրայ նախամեծարութիւն տալով ֆրանսականին :

Նուպար փաշա ալ , ինչպէս իրմէ առաջ Մուհամմէտ Ալի փոխարքան և Արթին Պէյ Չրադեան , Սուէզի ջրանցքին բացումը քաղաքական տեսակէտով օգտակար չէր գտներ Եգիպտոսի ապագային համար . սակայն Նուպար երբէք արգելք չեղաւ տնտեսական և առեւտրական տեսակէտով գերազանցապէս օգտակար այդ հսկայ գործին յաջողութեանը , և երբ Իսմայիլ փաշայի օրով , 1863ին , շատ մեծ դժուարութիւններ ծագեցան ու ձեռնարկը պահ մը ընդհատեցաւ և պաշտօն յանձ-

Նուեցաւ իրեն նախ Պոլիս և ապա Բարէղ երթալ ու հարթել այդ դժուարութիւնները՝ սիրով ընդունեց այդ պաշտօնը, և բանակցելով Սամ. կառավարութեան և Ֆրանսայի հետ՝ ի գլուխ հանեց զայն կատարեալ յաջողութեամբ, որով միայն կարելի եղաւ շրանցքին աշխատութեանց վերսկսումն ու աւարտումը 1869ին :

Եգիպտոս վերադարձին, ի վարձատրութիւն՝ Նուպար ստացաւ Փաշայութեան տիրոջ ու անուանուեցաւ անպաշտօն նախարար : Յետոյ եղաւ նախարար հանրօգուտ շինութեանց, շատ մեծ զարկ և ընդարձակութիւն տալով այդ պաշտօնատունէն կախում ունեցող գործերուն ու աշխատութեանց :

Նուպար վաշա 1867ին Պոլիս գացած է դարձեալ և Բ. Դրան հետ բանակցելով Փոխարքաներուն համար ԽՏԻ տխտղոսն, օտար տէրութեանց հետ առեւտրական դաշնագիր կնքելու արտօնութիւնն և Եգիպտոսի ներքին վարչութեան համար յատուկ օրէնքներ հաստատելու իշխանութիւն ստացած է Սուլթանէն, նաև Սուլթանին հաւանութիւնն առած է որ անկէ հտքը Խտիւներուն արու զաւակներն ուղիղ գծով յաջորդեն իրարու :

Նուպար փաշա Եգիպտոս գալէն ի վերկը տեսնէր թէ հիւպատոսարաններն ու իրենց դատարանները գաբիթիւլախօնները պատրուակ բռնած՝ շատ պարագաներու մէջ յանրապետի կը պաշտպանէին իրենց հպատակները, կը տեսնէր նաև թէ բնիկ դատարանները պէտք եղած կերպով կազմուած չէին և դատաւորներու լաւ բնորութիւնն և անկախութիւնը ապահովուած չէր. այս վիճակէն յառաջ կուգային անպատեհութիւններ, յապաղումներ, խառնաշփոթութիւններ ի վնաս Եգիպտական կառավարութեան որ յաճախ և անհարկի կերպով կ'ըբաղէր դիւանագիտօրէն և կը վճարէր մեծաքանակ տուգանքներ, եւ ի վնաս եգիպտացի բնիկներուն, որոնց դէմ դործուած ոճիրներն ստէպ անպատիժ կը մնային և որոնք կը կողոպտուէին, կալուածադուրկ կ'ըլլային մանաւանդ շահամուտ եւրոպացւոց կողմէ: Նուպար փաշա հետեւապէս 1867ին կը ծրագրէ վերցնել հիւպատոսարանական դատարանները, նաև եգիպտական այն ատենուան քաղաքային դատարաններն եւ կազմել անկախ և խառն դատարաններ, ուր բնիկ և օտար տարրերը ներկայացուցիչներուն ենեան, և որոնց առջեւ քննուին ու վճռուին

բոլոր քաղաքային, առեւտրական և եղեւնա-  
կան դատերն որ պատահին զանազան ազգու-  
թիւններու մէջ, բնիկ թէ օտար :

Նուպարեան ծրագիրն որ Իսմայիլ փաշայի  
միջոցաւ Կ. Պոլսոյ դեօպաններուն հաղոր-  
դուած էր, մերժուեցաւ Բարիզ կազմուած  
յանձնաժողովէն. սակայն Նուպար փաշա,  
Քափուրի դպրոցէն, դիւրաւ յուսահատողնե-  
րէն շէր, և տարիներու ընթացքին մէջ կրկին  
և կրկին դիմումներ ու ձեռնարկներ ըրաւ,  
ուղեւորու թիւններ կատարեց Եւրոպա և Պոլիս,  
մաքառեցաւ ներքին և արտաքին անհամար  
դժուարութեանց եւ խոչընդոտներու դէմ եւ  
վերջապէս 1874 և 1875ին տէրութիւններէն  
ընդունել և Բ. Դունէն հաստատել տուաւ որ  
«անկախ խառն դատարաններ կազմուին Ե-  
դիպտոս՝ բնիկներու և օտարներու, տարբեր  
հպատակութեանց պատկանող անհատներու,  
նաեւ կարգ մը պարագաներու մէջ օտարու-  
հարատակ միեւնոյն ազգութեան պատկանող  
անհատներու միջեւ ծագած քաղաքային եւ  
առեւտրական դատերը քննելու և վճռելու  
համար», ըստ այն օրինագրքերու զորս իր  
ներշնչման տակ խմբագրել տուած էր արդէն :  
Ինչպէս կը տեսնուի, այդ դատարաններուն

դժբաղդաբար իրաւասութիւն չի տրուեցաւ եղեռնական խնդիրներու վրայ, որոնք ցարդ ենթարկուած են ամբաստանեալ կողմին հիւպատոսարանին կամ դատարանին իրաւասութեան:

Սակայն դործին կարեւորագոյն մասը կաւարուած էր արդէն և «Եւրոպացիք բարոյացուցուած էին», ինչպէս կ'ըսէր նոյն ինքն Նուպար փաշա իրեն յատուկ սրամտութեամբ: Եւ երբ 1878ին՝ երկու տարի բացակայ եւ հրաժարած մնալէ յետոյ՝ նախարարապետ եղած էր արդէն, եւ ուզեց բնիկ դատարաններն ալ օժտել կարեւոր բարենորոգումներով՝ դժուարութիւն չկրեց բնաւ:

Նուպար փաշա, որ իր բովանդակ պաշտօնավարութեան մէջ իրեն նշանաբան ըստրած էր «Ֆէլլահին ճակատագրին բարւոքումը», միշտ, մանաւանդ իր այս նախարարապետութեան միջոցին հետամուտ եղաւ այդ նշանաբանին դործադրութեան՝ այնպիսի ճարտար եւ արդիւնալից եղանակաւ մը, որու նրմանը, ինչպէս իրաւամբ դիտել կուտայ պատմագիր մը, Եգիպտոս չունի իր 6000 տարուան պատմութեան մէջ. Նուպար կը կոչուէր «Ֆէլլահին մարդը», «Ֆէլլահին բարեկամը», և «Ֆէլլահը»՝ այն ատեն վեցուկէս միլիոն ժո-



ղովուրդ , կը գուրդուրար Նուպարին վրայ :  
Խտիւ Խամայիլ փաշա , թէեւ հանճարեղ  
եւ մեծագործ անձ , բայց չէր գիտեր չափ  
դնել իր շռայլութեանց և հետեւորար դրամի  
յարաճուն պէտքեր ունենալով մտադրեց կալ-  
ուածական քանի մը տարեկան տուրքերը  
կանխիկ գանձել : «Փէլլահին բարեկամը» եթէ  
չկրցաւ կասեցնել իր տէրը այդ ծրագրին  
գործադրութեան մէջ , գէթ յաջողեցաւ զայն  
սահմանափակել և անոր հետեւանքները մեղ-  
մացնել : Սակայն Խամայիլ փաշայի այս գործը  
դժգոհ ըրաւ եգիպտական հանրային պարտքի  
անտուկէն պահանջ ունեցողներն , ու քիչ յե-  
տոյ Տը Պլինիէռ և Ռիլէր Ուիլսըն՝ ֆրանսա-  
կան ու անգլիական կառավարութեանց կողմէ  
Եգիպտոս կը ղրկուէին՝ երկրին ելեւմուտքը  
հսկողութեան տակ առնելու համար : Այս առ-  
թիւ Խամայիլ և Նուպար փաշաներու միջև ար-  
դէն գոյութիւն ունեցող անհամաձայնութիւնն  
աւելի շեշտուեցաւ և Նուպար համերաշխութիւն  
չգտնելով իր պաշտօնակիցներուն քով , տեղի  
տուաւ ու մեկնեցաւ Եւրոպա : Երկու ամիս  
ետքը Տը Պլինիէր և Ուիլսըն ալ կ'ստիպուէին  
թողուլ իրենց պաշտօնը . սակայն աւելի ետ-  
քէն Հանրային Պարտուց Միջազգային վարչու-  
թիւնը կը հաստատուէր Գահիրէի մէջ :

Սակայն 1878ին Թէլֆիզ փաշան կայսերական ֆերմանով կը յաջորդէր իր հօրը Իսմայիլ փաշայի, որ գահազուրկ կ'ըլլար և կը մեկնէր Երկրէն: Նուպար փաշայի նախարարական պաշտօնէ հեռացումը տեւեց գրեթէ չորս ու կէս տարի եւ եւթ 1883ին վերջերը նորէն արտաքին գործոց նախարար և նախարարապետ եղաւ միանգամայն՝ Արապիի դէպքերը արդէն պատահած էին և անդղիական բանակը դրաւած էր Եգիպտոսը:

Նուպար փաշայի մինչեւ այն ատեն երկրագործութիւնը ծաղկեցնելու համար ըրածները, օրէնքներու բարեփոխում, ջրանցքներու բացում, եւլն, թերի միջոցներ էին եւ մասնակի արդիւնքներ միայն տուած էին, հետեւաբար կ'ուղէր և կը ջանար իրագործուած տեսնել արդէն պատրաստ վիթխարի ծրագիրն որով միայն երկրագործութիւնն իր զարգացման գագաթնակէտը պիտի հասնէր:

Այդ ծրագրին գործադրութեամբ, որ 100 միլիոն ֆրանք պիտի արժէր եգիպտական գանձին, Նեշոսի հովիտը պիտի պաշտպանուէր ողողումներու դէմ, դետին յորդումն այլեւս չպիտի պատճառէր ահագին վնասներ եւ Նեղոս նաւարկելի պիտի ըլլար Միջերկ-

րականէն մինչեւ Հասարակած, դիւրին ճամբայ մը Եգիպտոսը պիտի միացնէր Ափրիկէի կեդրոնին և շուրջ 6 ու կէս միլիոն քիլոմէթր տարածութեամբ մինչեւ այն ատեն անմշակ հողեր մշակելի պիտի դառնային, շնորհիւ ահագին շտեմարանի մը, որ պիտի կառուցուէր Գօմ. Օնպօսի մէջ:

Մեզք որ շատ մը պարագաներ արդելք եղան այս ծրագրին գործադրութեան:

Եգիպտական կարեւոր խնդիրներու շուրջ քանիցս բաղխումներ ունեցան Նուպար փաշա եւ Մեծին Բրիտանիոյ ընդհանուր հիրպատոս ու դիւանագիտական լիազօր գործակատար Լօրտ Գրօմըր, որ դրաւ իջ բանակն իր կռնակն ունէր եւ որ ամէն բան անգղիական ակնոցով կը դիտէր և ըստ այնմ գործել կ'ուզէր:

Նուպար փաշա հրաժարեցաւ 1889ին եւ անկէ յետոյ ալ նախարարապետի պաշտօն վարեց եւ արդի Խտիւին բացակայութեան առթիւ երկու անգամ Խնամակալ (régent) եղաւ Եգիպտոսի:

Նուպար փաշա անգղիական ստնձգութեան դէմ միշտ պաշտպանած է Եգիպտոսի շահերն ու իրաւունքները: Վերջնապէս հրաժարեցաւ իր պաշտօնէն 1894ին եւ քաշուեցաւ

քաղաքական ասպարէզէն ու մեկուսացաւ ի  
Բարիզ :

Նուպար փաշայի անունն անցած է օսման-  
եան տարեգրութիւններուն մէջ եւ ոսկեքան-  
դակ արձանագրուած Եգիպտոսի պատմու-  
թեան և ժողովրդեան սիրտին մէջ, իր արժա-  
նիքը գնահատուած ու վարձատրուած է վէզի-  
րութեան ամենաբարձր աստիճանով, օսմանեան  
եւ օտար առաջնակարգ պատուանշաններով :

Մեծ մասամբ Նուպար փաշայի նուիրած  
դրամագլխով հիմնուած է Նուպար—Շահնա-  
զարեան վարժարանը, որ իր քանի մը տար-  
ուան կեանքին մէջ բաղմաթիւ հմուտ և լեզ-  
ուագէտ աշակերտներ ընծայեց աղգին, ի նը-  
պաստ արկածեալներու և չքաւորներու ամէն  
հանգանակութիւններու մասնակցած և Եգիպ-  
տոսի աղգային հաստատութեանց իր նուէրները  
անպակաս ըրած է միշտ: Աշխարհածանօթ հայ-  
կական ջարդերէն ետքը (1895—6) Բարիզ ա-  
պաստանող հայ գաղթականներուն համար տուն  
մը բացած եւ բաւական ժամանակ պահպա-  
նած է ու շատ մը կարօտ ուսանողներու նիւ-  
թապէս նպաստած է: Եգիպտոսի մէջ իր շը-  
նորհիւ հայ թէ օտարաղգի շատ մեծ թիւով  
անհատներ իրենց վիճակին եւ յատկութեանց  
համեմատ գործ ու պաշտօն գտած են :

Նուպար փաշա փափաքող էր որ Հայ ազգին անցեալը յաւ ճանչցուի Եւրոպացիներէն, ասոր համար իր ծախքով պատրաստել և Բարիզի մէջ տպագրել տուած է Վիգթօր Լանկլուայի Հայոց Քրանսերէն պատմութիւնը, ինչպէս եւ անմահ Ալիշանի Սիսուանի Քրանսերէն թարգմանութիւնը՝ ի Վենետիկ :

Գտհիրէի մօտ իր ազարակին մէջ մզկիթ մը շինած է՝ տեղւոյն բարեպաշտ Իսլամներուն համար :

Նուպար փաշա ազգային վարչական մարմիններու մէջ աթոռ ունենալ ուզած չէ . բայց կարեւոր պարագաներու մէջ — ինչպէս Եգիպտոսի և Երուսաղէմի միջեւ ծագած կալուածական խնդրին ատեն — երբ դիմում եղած է իրեն, միջամտած և գործը յաջողութեամբ ի գլուխ հանած է . ասկէ զատ Նուպար փաշա իր բարձր դիրքով և խմաստուն խորհուրդներով շատ անգամ Եգիպտոսի Առաջնորդարանին դէմ ելած դժուարութիւնները հարթած է :

Նուպար փաշա 1899 Յունուար ամսոյ ըսկիզբը վախճանած է Բարիզի մէջ և մարմինը Աղէքսանդրիա փոխադրուելով մեծահանգէս յուղարկաւորութեամբ ամփոփուած է Հայոց եկեղեցւոյ պարտէզը, յատկապէս պատրաստուած դամբաղանին մէջ :

Օրուան նախարարապետն և խառն Գա-  
տարաններու վերաքննիչ Ատեանին նախագահը  
Մեծ Հայուն մարմինը հողին յանձնելու պա-  
հուն պարագային յարմար դամբանականներ  
խօսած են :

Նուպար փաշայի կրանիթեայ գեղեցիկ  
արձանն իր ընտանեաց կողմէ զետեղուած է  
անոր գերեզմանին վրայ :

Աղէքսանդրիոյ Քաղաքապետական Խոր-  
հուրդին նախաձեռնութեամբ և ժողովրդային  
հանդանակութեան արդիւնքով՝ Նուպար փա-  
շան ներկայացնող արոյրէ հիանալի արձան մըն  
ալ պատրաստել տրուած է Բարիդի նշանաւոր  
արուեստագէտ Տընի Բուէշի գործարանին մէջ :

Այս արձանին բացումն Աղէքսանդրիոյ  
«Գերմանական պողոտայի» պարտէզներուն մէջ  
կատարուեցաւ 1904 Յունիս 3ին, Ն. Բ. Խտի-  
ւին կողմէ ներկայ էր նախարարապետ Մուս-  
թաֆա փաշա Փէհմի : Ներկայ էին նաև բոլոր  
նախարարները, Լօրտ Գրօմըր, դիւանագի-  
տական և հիւպատոսական մարմինն ու Գահի-  
րէի, Աղէքսանդրիոյ և Մանսուրայի խառն  
Գատարանաց բոլոր անդամները, տեղացի հա-  
սարակութեանց հոգեւոր պետերը և եւրոպա-  
կան գաղութին երեւելիները, ևն, ևն :

Որոտընդոստ ծափահարութիւններու մէջ-  
տեղ հինգ աստեղախօսութիւններ արտասան-  
ուեցան՝ արձանի յանձնաժողովի նախագա-  
հին, Աղեքսանդրիոյ կառավարիչին, Մուսթա-  
ֆա փաշա Ֆէհմիի, Խառն Դատարանոց վե-  
րաքննիչ Ատեանի նախագահին և Նուպար փա-  
շայի զաւակ Պօղոս փաշայի կողմէն :

Արձանը ղետեղուած է վարդազոյն կրա-  
նիդեայ պատուանդանի մը վրայ : Նուպար  
փաշա ներկայացուած է բազկաթուռի մը մէջ  
նստած, իր շուրջը սիւռած են օրէնքի դիր-  
քեր ու տետրակներ : Փաշային աջ կողմը  
կիսովին ծածկուած է վերարկուով և ձախ  
ձեռքը կաթնցուցած է դրքի մը վրայ, որ  
հետեւեալ արձանադրութիւնը կը կրէ. «Ար-  
դարութիւնն ամէն կառավարութեան հիմն է» :

Նուպար փաշայի անունը, ծննդեան եւ  
մահուան թուականներուն հետ՝ ոսկետառ  
քանդակուած է պատուանդանին ճակատը  
Ֆրանսերէն և արաբերէն լեզուներով :

Եզխպատսի կարեւոր մէկ ջրանցքը, Գա-  
հիրէի մէջ մեծ արահետ մը, Աղեքսանդրիոյ  
Խառն Դատարանի մօտիկ մէկ փողոցը և Եզխպ-  
ատսի բամպակներուն ամէնէն աղնիւ տեսակը  
Նուպար փաշայի անունով կը կոչուին «Նու-  
պարեան» :

Տասնեւիններորդ դարու մէջ ժամանակագրական կարգով Եգիպտոսի հինգերորդ հայ նախարարն եղած է Տիգրան փաշա ՏՄ.պրօ (\*), որ շատ պղտիկ հասակէն մտած է պետական ծառայութեան մէջ,

(\*) Բագրատունի Տան իշխաններն Անիի կործանումէն ետքը՝ կարին կ'անցնին և վաճառականութեամբ կ'զբաղին: Ասոնց սերունդէն Աստուածատուրի որդիքն՝ Ալփիար և Ասլան 1521ին Պելկրաս կը գաղթեն իրենց ընտանիքներով: Գաղթողներուն շառաւիղներէն մէկն՝ Օսմանեան բանակին վաճառական Արրահամ մեծ Եպարքոս Քէօփրիւլի Հիւսէյին փաշայէն կը կոչուի «Ապրօ», որ անկէ ետքը Բագրատունիներուն մականունը կ'ըլլայ: Արրահամի որդին Մատթէօս 1684ին Իզմիր կը հաստատուի: Ապրօները Սուլթան Իպրահիմէն, Ֆրանսայի Լուի ԺԴ. թագաւորէն և Ռուսաց Մեծն Պետրոս կայսրէն ազատ վաճառականութեան և ազնւականութեան հրովարտական ստացած են: Յիշեալ Մատթէօսի թոռերէն Ստեփանի զաւակն է Տիգրան փաշա, որ հոլանտացի մօրմէ, Էմմա Սփարքէս, ծնած է ի Գահիրէ 1846 ապրիլ 15ին: Կնքահայրն եղած է այն ատենուան Առաջնորդ Գարրիէլ Ս. Եպիսկոպոս:

Այս տեղեկութեանց գլխաւոր աղբիւրն է 1894 Ապրիլ 20ին Իզմիրի Առաջնորդարանէն եւ 1877 Փետր. 9ին Պոլսոյ Ներսէս Պատրիարքէն



Երբ Եգիպտոս առաջին անգամ ըլլալով պատասխանատու նախարարապետ կ'ունենար և այս առթիւ հարկ կ'ըլլար կազմակերպել կարգ մը նոր դիւանատուններ, այս գործը կը յանձնուի Տիգրան փաշայի, որ այն ատեն նախարարաց Խորհուրդի քարտուղարն էր եւ որ յաջողութեամբ ի գլուխ կը հանէ զայն :

Տիգրան փաշա 1882ի ամառն արձակուրդով Եւրոպա կը գտնուէր, երբ զինուորական ապստամբութիւնն Արապի փաշայի առաջնորդութեամբ անգամ մըն ալ պայթեցաւ և Յունիս Ալին արիւնոտ պատահարներն տեղի ունեցան Աղէքսանդրիոյ մէջ : Տիգրան փաշա առանց սպասելու արձակուրդի պայմանաժամի լրանալուն՝ ինքնաբերաբար փութաց իր պաշտօնին գլուխն և ներկայացաւ Խաիւ Մուհամմէտ Թէվֆիգ փաշային, որ անոր և հայազգի Զոհրապ փաշային պաշտօն յանձնեց բանակցել Աղէքսանդրիոյ առջև խա-

---

հաստատուած վաւերագիր մը, որու բնագիրը այս տողերը գրողը տեսած է և որ հիմնուած է Բագրատունի կամ Ապրօ ընտանիքին մէջ պահուած և կաթսղիկոսներէ և ուրիշ վստահելի աղբիւրներէ տրուած շատ հին վկայութիւններու վրայ :

րսխած անգղիական նաւատորմի զի հրամանա-  
տար Պօչան Սէյմուր ծովակային հետ : Տիգ-  
րան փաշա այս դժուարին ու փափուկ պաշ-  
տօնն ընկերոջ հետ կատարեց յաջողութեամբ  
և ալ աւելի սիրելի եղաւ Թէվֆիք փաշայի :

Յաւալի է որ դէպքերն անկէ ետքն դա-  
հավէժ ընթացք մը առին , ու Խտիւին , իր  
խորհրդականներուն եւ յատկապէս Պուսէն  
դրկուած կայսերական բարձր պատուիրակ  
Տէրվիչ փաշայի խաղաղասիրական յորդորներն  
և ձեռք առած խոհեմ միջոցները չազդեցին  
զինուորական ապստամբութեան գլխաւորներուն  
վրայ և Աղէքսանդրիա քաղաքը Յուլիս 12ին  
անգղիական զրահաւորներէն բնականօրէն  
և հետեւեալ տասն օրերուն մէջ եզրպատացի  
ապստամբ զինուորներն և շարագոյծներու կա-  
տաղի խումբեր օտարականներու տուները կո-  
ղոպտեցին , դժբաղդ քաղաքը հրդեհեցին և  
չատ քրիստոնեաներ ջարդեցին :

Ապստամբ զինուորները չբաւականացան  
այսչափով և մտադիր էին ուժանակով խոր-  
տակել Սուէզի ջրանցքին երկու կողմի թում-  
բերն ու խափանել շողենաւերուն անցուղարձը :  
Այս շատ յանդուգն ու շատ վտանգսուոր  
խորհուրդն եթէ իրականութիւն գտնէր , ո՛վ

գիտէ քաղաքական և տնտեսական ինչ անհաշուելի աղէտներ պիտի պատճառէր Եգիպտոսի :

Այս ճգնաժամի պահուն, խտիւն Աղէքսանդրիա կը գտնուէր, Նախարարաց Խորհուրդին անդամները ջրուած կամ հեռացած էին անոր քովէն . իր մօտ կային միայն մէկ քանի անձնուէր և հաւատարիմ խորհրդատուներ, որոնցմէ մէկն էր Տիգրան փաշա : Սուէզի ջրանցքին բացման հեղինակ, մեծանուն Ֆէրտինան տը Լէսէփս, այս միջոցին Եգիպտոս կը գտնուէր, կ'իմանայ ապստամբներու այդ խորհուրդը, խտիւին դիմում կ'ընէ և անոր կարգադրութեամբ Տիգրան փաշա և ընկերները՝ խտիւին, Տը Լէսէփսի և Արապի փաշային միջեւ բանադնացի պաշտօն կը կատարեն և շնորհիւ այդ բանադնացութեան՝ ջրանցքն ազատ կը մնայ իր գոյութեան ըսպառնացող վտանգէն :

Տիգրան փաշա դեռ շատ երիտասարդ էր, երբ Արտաքին Գործերու Նախարարութեան Խորհրդական կարգուեցաւ : Նախարարն էր ծերունազարդ Զիւլֆիւքեար փաշան, որ մեծ սէր ու վստահութիւն ունէր Տիգրան փաշայի վրայ և գրեթէ անոր յանձնած էր նախարարութեան ղէկը :

Տիգրան փաշա շատ մեծ դեր խաղացած է յօգուտ Եգիպտոսի, երչ արդի Խտիւին դահակալութեան առթիւ տրուած կայսերական հրովարտակին մէջ՝ Սուլթան Համիտ Ն. Բարձրութեան իրաւասութեան շրջանակէն դուրս ձգած էր Զէյլա և ուրիշ տեղեր, որոնք թէեւ բուն Եգիպտոսի հողին մաս չեն կազմեր, սակայն անոնց վարչութիւնն Եգիպտոսի Խտիւներուն կը պատկանի զանազան թուականներով տրուած կայսերական հրովարտակներու զօրութեամբ ։

Իբր հետեւանք եղած դիտողութեանց՝ Սուլթան Համիտ կ'ատիպուի յիշեալ տեղերուն վրայ Խտիւական իրաւասութիւնը վերահաստատել ։

Տիգրան փաշա՝ Ռիազ փաշայի դահլիճին մէջ՝ երկու անգամ Արտաքին Գործերու նախարար եղած և Եւրոպական մէկ քանի տէրութիւններու հետ առեւտրական դաշնագրեր կնքած է և Եգիպտական կառավարութեան մեծ տաղտուկ պատճառող հինաւուրց խնդիր մը — երբեմն Օսմանեան հպատակ ու ետքէն հեյլենական թագաւորութեան ենթակայ կղզիներէն Եգիպտոս պանդխտող Յոյներու հպատակութեան խնդիրն — վերջնապէս կար-

գաղբրած է՝ Յունաց ընդհանուր հիւպատոս և դիւանագիտական գործակատար Պ. Կռիփարիսի հետ, որ ետքէն Պոլսոյ հիւպատոս եղաւ և հիմայ ալ իր երկրին Արտաքին Գործերու նախարարն է :

Տիգրան փաշա իր նախարարական պաշտօնին մէջ Խտիւներու իրաւունքներն և Եգիպտական շահերն եռանդով պաշտպանելուն համար՝ իր վրայ հրաւիրած է անգղիական իշխանութեանց դժգոհութիւնը : Անգամ մը ստիպուած է Լօրտ Գրօվրրի երեսն ի վեր ըսելու . «Եգիպտոսի նախարար մըն եմ ե՞ս թէ՛ անգղիական կառավարութեան վճարեալ մէկ պաշտօնեան» :

Ոմանց կարծիքն է թէ Տիգրան փաշայի այս խօսքը նախարարապետութեան ճամբան փակած է անոր առջեւ :

Տիգրան փաշա շատ սիրուած ու յարգըւած էր Խտիվական տան իշխաններէն և օտար ամենաբարձր շրջանակներէն :

Տիգրան փաշա 1883ին, Ստեփան փաշա Առլանեանի լիազօր պատուիրակութեան օրով, նախ երեսփոխան և յետոյ ալ Ազգային Գաւառական Ընդհանուր Ժողովոյ ատենապետ ընտրուած է և այդ պաշտօնին մէջ մնացած

է մինչեւ վերջը, շատ օգտակար ըլլալով մասնաւորապէս դժուարին ու կնճռոտ խրնդիրներու լուծման պարագաներուն :

Տիգրան փաշա նխաժապէս և բարոյապէս միշտ սատար հանդիսացած է մանաւանդ հայկական բարենպատական հաստատութիւններու և ձեռնարկներու, թուրքիոյ հայկական ջարդերէն ետքն՝ Եգիպտոս ապաստանողներու պէտքերու հայթայթման համար ոչ միայն իր անձնական քսակէն մեծ զոհողութիւններ ըրած է այլև հասոյթի աղբիւրներ ստեղծած է օտար շրջանակներու մէջ և խիստ շատերուն գործ ճարած կամ պաշտօններու մէջ հաստատած է և կամ վերադարձի ծախքը հոգացած է :

Տիգրան փաշա հիւանդութիւնը դարմանել տալու համար Էվիան-լէ-Պէն (Ֆրանսա) գացած էր 1904ին, իր մահը հոն պատահեցաւ Յուլիս 29ին, մարմինը Գահիրէ փոխադրուած է Նոյեմբերին :

Տիգրան փաշա ողջութեանը կամք յայտնած էր որ յուղարկաւորութիւնն անշուք կերպով կատարուի. որքան որ իր այս կամքը տեղը տանելու հոգ տարուած էր ընտանիքին կողմէ, սակայն պերճաշուք անձնաւորութիւն-

ներ խուռն բաղմութեամբ փութայած էին յուղարկաւորութեան . յիշենք անոնցմէ մէկ քանին միայն . Իշխան Հիւսէյին փաշա և նախորդ նախարարապետ Ռիազ փաշա՝ որոնք բռնած էին դադաղին առջեւէն տարուող ծածկոցին ծոպերը, օրուան նախարարները, Լօրտ Գրօ ըրի առաջնորդութեամբ՝ հիւպատոսներն և դիւանագիտական գործակալներն, ևլն :

Տիգրան փաշայի մարմինն ազգային գերեզմանատան ընտանեկան դամբարանին մէջ կը հանդչի առընթեր երկրային մնացորդներուն իր վաղամեռիկ ամուսնոյն, Տիկին Զիպայի, որ նուսպար փաշայի կրտսեր աղջիկն էր :

Տիգրան փաշա կտակով 50000 Փր. ձգած ըլլալով Գահիրէի Ազգ. Առաջնորդարանին, եղբայրն իշխան Ս.սլան Ս.պրօ, փաշային մահէն անմիջապէս ետքը վճարած է զայն :

Տիգրան փաշայի համակրողներն անոր իւզաներկ մեծադիր և գեղեցիկ մէկ պատկերը նկարիչ Պ. Երուանդ Տէմիրճեանի գծել տալով նուիրած են Առաջնորդարանի, որ ի նշան երախտագիտութեան կախած է զայն ժողովասրահին մէջ :

Այստեղ հարեւանցի և յետադարձիկ ակնարկ մը աւելորդ չենք համարեր ի մասին

այն Հայերուն, որոնք թէեւ նախարարական  
աթոռներու վրայ չբաղմեցան, սակայն ժթ.  
դարուն, պետական ուրիշ գործերու մէջ  
կամ իրենց անձնական դիրքով նշանաւոր ե-  
ղած են և կամ ազգին ու եկեղեցիին մա-  
տուցած ծառայութիւններով անուն մը թո-  
ղած են Եգիպտահայ պատմութեան մէջ :

Երբ Մուհամմէտ Ալի փաշա Եգիպտոսի  
կուսակալութեան դիրքին մէջ կը հաստատ-  
ուէր, Ակնցի Եղիազար Ա. իրա սեղանաւորա-  
կան կարեւոր տուն մը ունէր Գահիրէի մէջ :  
Մուհամմէտ Ալի իր քով կը կանչէ Եղիազարն  
ու կ'ըսէ անոր. « Իշխանութեան գլուխ ան-  
ցանք, սակայն պետական գանձը դատարկ  
է » : Ուշիմ սամիրան կը պատասխանէ. « Իմ  
նիւթական աւելոյց կարողութիւնս և վայե-  
լած վարկս, ամէնը մէկտեղ իմ անձիս հետ  
Ձեր տրամագրութեան տակ կը դնեմ » : Ե-  
ղիազարի այս պատասխանը շատ հաճելի  
կ'ըլլայ վեհանձն փաշային, զանի իրեն սեղա-  
նաւոր կ'ընէ նախ և ետքէն մեծ շնորհներով կը  
լեցնէ : Կ'ըսուի թէ Եղիազարի մահուան ժա-  
մանակ մեծ փաշան տեղեկանալով որ Եգիպ-  
տոսի մէջ ազգական ձգած չէ ան, մինչեւ  
Ակն յատկապէս մարդ կը զրկէ և սամիրային



քեռորդիները Ալիքսան և Յակոբ աղաներն  
Եզիպտոս բերել տալով իրենց մտերգբօր յա-  
ջորդ կը կարգէ : Ասոնք ետքէն որբերու կա-  
ռավարական սնտուկին ալ վարիչ կը նշա-  
նակուին :

Ալիքսան և Յակոբ աղաներն Եզիպտար ա-  
միրայի մահէն ետքը , սակայն անոր արդիւն-  
քով՝ կիրակոս Եպիսկոպոսի առաջնորդութեան  
օրով , Գահիրէի Պէնի Սուրէնի թաղին մէջ կը  
շինեն երկյարկանի «Հոգետուն» մը , «հիւան-  
դանոց» մը , ներքեւ ալ մեծակառօյց «Չրհոր»  
մը : Հոգետունն ու հիւանդանոցն երկար ա-  
տեն իրենց նպատակին ծառայելէ ետքը ,  
1888ին Թաղւոր փաշա Յակոբեանի ծախքով  
նորոգուած են և այսօր վերի յարկը Ման-  
կապարտէղի վերածուած է , վարի յարկն ալ  
պաշտօնական մարմիններու ժողովատեղի  
էլն. եղած է : Իսկ ներքեւի Չրհորը , որ ժա-  
մանակ մը 8000 Քր. տարեկան հասոյթ կ'ար-  
տադրէր՝ Գահիրէի մէջ ջրաբաշխական ընկե-  
րութեան հաստատումէն ի վեր իրաց բնա-  
կան բերմամբ անգործածելի դարձած է :

Ալիքսան և Յակոբ աղաները միեւնոյն  
չըջապատին մէջ շինած են նաև «Իպրատուն»  
մը և «Հիւրանոց» մը : Իպրատունն որ հիւ-

րանոցին վերնայարկն էր, իր նպատակին կը ծառայէ մինչեւ Խորէնեան կամ Գալուստեան վարժարանի շինութիւնը 1854ին : Անկէ ետքն եղած է Քահանայատուն : Իսկ ներքեւի յարկը Առաջնորդարան, Դիւանատուն եւլն ըլլալէ ետք՝ այսօր Մանկապարտէզին ճաշարանն է :

Կարապետ Պէյ Նուպար, Նուպար փաշայի եղբայրը, և Խոսրով Պէյ Չրաքեան եղած են Մուհամմէտ Ալիի առաջին քարտուղար-թարգմանները :

Նշանաւոր եղան Գլխօր և Մկրտիչ Րէյիղեան եղբայրները, որոնք Նեղոսի վրայ շոգենաւ կը բանեցնէին : Ողբացեալ Կարապետ Պէյ Րէյիղեան եղած է Աղէքսանդրիոյ Խառն Վերաքննիչ Դատարանի անդամ և Նշանակելի գիրք մը գրուած բարձր դասու միջազգային շրջանակներուն մէջ : Իր եղբայրը Յարութիւն Պէյ Րէյիղեան այժմ անդամ է նոյն Բարձր Դատարանին :

Նշանաւոր եղած է նաեւ Պետրոս ամիրա Եուսուֆ, Պօղոս Պէյ Եուսուֆի եղբայրը, որ Թրիէստ կը նստէր ու Եւրոպայի ու Եգիպտոսի միջեւ առեւտրական միջնորդ էր : Եգիպտական կառավարութիւնն այն ատեն տասանորդի տուրքերը կ'ստանար

ոչ թէ հնչուն դրամով, ինչպէս հիմա, հապա  
երկրին արտադրած բերքերով, բանակ, ցո-  
րեն, դարի, ոսպ, ևլն: Կառավարութիւնն  
այդ մեծաքանակ բերքերն Պետրոս Պէյի կը  
ղրկէր, որ զանոնք կը ծախէր եւրոպական  
հրապարակներու վրայ և կը հայթայթէր Ե-  
գիպտոսի բանակին և կառավարութեան  
ղգեստեղէնի և ուրիշ բոլոր պէտքերը և ա-  
ւելցած դրամը կը հասցնէր Եգիպտոսի պե-  
տական դանձին:

Պետրոս ամիրա Եուսուֆ, իր հայրենի  
քաղաքին Իզմիրի հայ վարժարանին մէջ, ա-  
ռաջին անգամ Ֆրանսերէն եւ Անգղիերէն  
լեզուներու դաստիսութեան պատճառ եղած  
է, այս առթիւ ընելով կարեւոր նուիրատու-  
ութիւն ՚ը, որու հասոյթով ընդ միշտ ապա-  
հովուած է, կ'ըսուի, նոյն լեզուներու ա-  
ւանդումը յիշեալ վարժարանին մէջ:

Ակնցի Գարաքէհեա Թերզոնց գերդաստանին  
անդամներն, Աբրահամ և Երամ ամիրաներն  
Մուհամմէտ Ալիի սեղանաւորներն եղան: Ա-  
սոնց զաւակներն ետքէն Երամեան մականունն  
առին եւ երկար տարիներ ի Պոլիս Եգիպտոսի  
Փոխարքաներուն ներկայացուցիչի (Գալու-  
ֆէհեալի) պաշտօնը վարեցին:

Ստեփան պէյ Րէսմի, վերատեսուչ Փա-  
րիզի Եգիպտական Վարժարանին, ուր իրենց  
ուսմունքը կը կատարելագործէին Եգիպտոսի  
իշխանազուններն եւ ազնուական ընտանիքնե-  
րու զաւակները :

Ռէստէն Պէյ, Ստեփան Պէյ՝ Փոխարքա-  
ներու և Եգիպտական կառավարութեան բը-  
ժիշկ ու բժշկապետ եղած են . կըսուի թէ  
"ուաջինը թողած է գրաբար և աշխարհաբար  
լեզուով գրուած բժշկարաններ :

Խաչատուր Պէյ Միքայէլ անուանի եղած  
է թարգմանութիւններով և Առեւտրական  
Դատարանի Նախագահի պաշտօնովը :

Յարութիւն Պէյ Պետան, անուն մը թո-  
ղած է բժշկական աշխարհին մէջ և ձգած է  
երկասիրութիւններ :

Ղազարոս Տէր Դասպարեան Աղէքսանդրիոյ  
մէջ երեւելի եղած է իր առեւտրական գոր-  
ծառնութիւններով :

Նշանաւոր եղած է նաև Գէորգ Պէյ Ռա-  
փայէլեան, որ 1852ին շինած է Պէնի Սուրէնի  
Առաջնորդարանը :

Արիստակէս Ալթուն Տիւրի, ժամանակ  
մը խմբագիր եղած է Եգիպտոսի պաշտօնա-  
թերթին :

Նախկին Առաջնորդ ելջանկայիշատակ  
Գաբրիէլ Ս. Եպիսկոպոս և Կարապետ աղա  
Գալուստ Եգիպտահայերու ազգային կեանքի  
մէջ շատ մեծ տեղ բռնած են, այս պատ-  
ճառով իրենց կենսագրութիւններն ժամանա-  
կաւ մասնաւոր ուսումնասիրութեան առարկայ  
եղած են այս տողերը գրողին կողմէ և հրա-  
տարակուած Գահիրէի լրագիրներուն մէջ :

Այդ կենսագրութիւնները վերատպուած  
են գրքուկիս յաւելուածին մէջ :

Պօղոս Պէյ Եւսուֆի ուսուցիչ Կեսարացի  
Աբրահամ վարժապետ կամ Խավաճա Աբրա-  
համ սեղանաւոր եղած է Փոխարքային, որմէ  
ընդարձակ հողեր և ապարանք մը նուէր ստա-  
ցած է Ղարապէ գիւղին մէջ : Խավաճա Աբրա-  
համ շէնցուցած է այդ գիւղն, և հոն շինած  
է մատուռ մը : Խավաճա Աբրահամի արժանա-  
ւոր յաջորդն եղած է եղբայրը, Բարթող Կիւլ-  
պէնկ, հայր Աբրահամ փաշա Բարթողի, որ  
ամենուն ծանօթ է իր բարեգործութիւններով :

Երեւելի եղած է նաև Կեսարացի Յակոբ  
էֆ. Աշրգեան, սեղանաւոր, որ մեծ կտակ մը  
ձգեց ազգային բարեգործական հաստատու-  
թիւններու ի նպաստ. այս կտակը դժբաղ-  
դաբար չի գործադրուեցաւ : Աշրգեան, իր  
ողջութեան, Երուսաղէմի Հայոց Ս. Յակօբ-

եանց Վանքին շատ բարիքներ ըրած ըլլալուն համար, մարմինը նոյն վանքին շրջապատին մէջ թաղուած է :

Իսկէնտէր Պէյ Պողարի, Արտաքին Գործերու նախարարու թեան տարեգրութիւններուն մէջ, մեծ անուն ձգած է իբրեւ քաջ լեզուագէտ և թարգմանչապետ : Հայրն է Եուսուֆ Աղիզ պէյի, որ այժմ անդամ է Գահիրէի Խառն Գաւառանին :

Իզմիրցի Թաղւոր փաշա Յակոբեան, որ իր ապարէզն սկսած է Ստեփան Ապրոյի ի Գահիրէ շինել տուած տան բանւորներուն վրայ հսկողութիւն ընելով, իր գործին զաւակն էր վարչական մեծ կարողութեան տէր էր, երկար ատեն Տայրէի Սէնիյէի և սկսական երկաթուղւոյ վարչութիւններուն մէջ եգիպտացի անդամն եղաւ ու ետքէն հրաժարելով անդաւաւորական տուն մը հիմնեց :

Թաղւոր փաշա Աղէքսանդրիոյ հայ գաղութին գործերն առանձին կամ իւրակազմ թաղական Խորհրդոյ մը աջակցութեամբ երկար ժամանակ յանձանձեց : Անոր այս ընթացքը թէև իր ողջութեանը ըննադատութեան տեղի տուած է, սակայն մահէն ետքը տեսնուեցաւ թէ լաւ տնտեսած է ազգային

անտուկը, այնպէս որ իր մատակարարութեան շրջանին մէջ 5—6000 ոսկի ծախքով Ս. Պօղոս-Պետրոս եկեղեցին շինուելէն ետքը՝ իր մահուան ժամանակ 14000 ոսկի արժէքով հնչուն դրամ և արժեթուղթ կը գտնուէր ազգային անտուկին մէջ։ Թագւոր փաշա մասնաւորապէս շատ օգտակար եղած է բազմաթիւ Հայերու, որոնք Աղեքսանդրիոյ 1882ի դէպքերուն ատեն վնասուած էին նիւթապէս։ Վնասուողներուն ա'էնն ալ և անձի կորուստ ունեցող ընտանիքներու վերապրող անդամները՝ իր սլաշտպանութեան և ջանքերուն շնորհիւ՝ կրցած են իբր փոխարինութիւն դրամական դոհադուցիչ հատուցում ստանալ Եղիպտական կառավարութենէն։

Թագւոր փաշա Գահիրէի Ս. Աստուածածին եկեղեցին իր ծախքով նորոգած է և կտակով հինգ հազար անգլ. ոսկի թողած է պայմանաւ որ երբ այդ գումարը տոկոսով տասը հազար ոսկիի բարձրանայ, Իզմիրի մէջ գիշերօթիկ աղջկանց վարժարան մը բացուի՝ իր վաղամեռիկ դստեր Գարուհիի անունով։

Եղիպտահայոց կիւթթէնպէրկէն, բնիկ Հալեպցի Աբրահամ Մուրատեանի անունը պէտք է յիշել մասնաւորապէս։

Գահիրէի մէջ առաջին անգամ Հայերէն լրագիր հրատարակելու պատիւն իրեն կը վերաբերի : Իր թերթին՝ կիսամսեայ Արմարենիին անդրանիկ թիւը՝ Փարիզէն Գահիրէ փոխադրած իր սեպհական տպարանէն լոյս կը տեսնէ 1865 Մարտ 16ին : Արմարենի շուտ թառամած է դժբաղդարար :

Հազար ութ հարիւր վաթսուն և հինգ տարին այլապէս նշանաւոր եղած է՝ Եգիպտոս այցելութեամբ բազմաճմուտ և բազմարդիւն կարապետ վարդապետ Շահնազարեանի, որ նոյն տարուան Յունուար 1ին ի Գահիրէ պատրաստած է իր ուշագրաւ կտակագիրն :

Այս կտակագիրը սկզբնապատճառ եղած է որ ետքէն Պոլիս Խանգիւղի մէջ բացուի նուապար — Շահնազարեան վարժարանն, որու մասին խօսեցանք արդէն այս նօթերուն մէջ :

Իր գործին զաւակն էր նաև Արաբկիրցի Պողոս էֆ. կարապետեան, որ շատ պղտիկ հասակէն Եգիպտոս եկած է և Փոխարքային պալատին մառանապետ և իր աղգական բարեգործ Մամաս և Յովհաննէս աղաներու ձեռքին տակ մարզուած և Արաբերէն գրական լեզուն իւրացուցած է :

Յովհաննէս աղայի մահէն ետքն՝ անոր



յաջորդած է իբրեւ մառանապետ: Յետոյ այս գործէն քաշուած և սեղանաւորական տուն մը բացած է: Չէյթունի և ուրիշ տեղի Հայերու նպաստներ ըրած է և Արաբկիրի մէջ հիմնած է վարժարան մը, որ 1895ի դէպքերու ատեն հրոյ ճարակ եղաւ:

Թողած է կտակագիր մը, որ իր մահէն ետքը բացուած է. այդ կտակագրով կարաստեան էֆ. Եգիպտոսի երկու նահանգներու մէջ ունեցած իբր 66 (\*) ֆէտտան մը շակեալ հողերը տուած է Արաբկիրու եւ Գահիրէի աղգային վարժարաններուն և Երուսաղէմի Ս. Յակոբեանց վանքին՝ պայմանով որ իր արական գծի ժառանգորդներն յաջորդաբար մաշտակարարեն այդ հողերն եւ զուտ արդիւնքը բաժնեն նոյն երեք հաստատութիւններու մէջ սա հաւեմատութեամբ. հարիւրին 45ը Արաբկիրու, 30ը Գահիրէի վարժարանին և 25ն ալ Երուսաղէմի վանքին:

Հակառակ Գահիրէի Հայոց Ս. աաջնորդարանին ջանքերուն, այս կտակագրի գործադրութիւնը դեռ սկսած չէ:

---

(\*) Մէկ ֆէտտանը 4200 քա. մեզրի չափ է:

Յիշատակութեան արժանի է նաև Զօհրապ փաշան, որ իր ամբողջ կեանքն անցուցած է պետական ծառայութեան մէջ. վերջին պաշտօնն էր Պատերազմական Գործոց Նախարարութեան Խորհրդականութիւն, որ մինչև իր մահը վարած է մեծ կարողութիւնով ու արդիւնքով:

Ազգային Սահմանադրութեան խմբագիրներէն Տքթ. Ստեփան փոշա Ասլանեան, իր ընտանեօք առժամապէս հաստատուած ի Գահիրէ, 1883ին խառնաշփոթ կացութեան մը օրերուն մէջ՝ Պոլսոյ Ազգային Պատրիարքարանի կողմէ Լեւոն Պատուիրակ կարգուած է Եգիպտոսի Առաջնորդարանին մօտ, կարգադրած է նախկին Առաջնորդ Մեսրոպ Եպիսկոպոսի ժամանակէն մնացած պարտուց բաղմամբայ եւ տխուր խնդիրը, նոյն տարուան հետախտի համաճարակին ատեն՝ աղքատաց նպաստաւոր տնօրէնութիւններ ըրած է և առաջին անգամ ըլլալով ազգային Սահմանադրութեան տրամադրութեան համաձայն ու տեղական հանգամանքներու և պայմաններու ներած սահմանին մէջ՝ ժողովներ և խորհուրդներ կազմակերպած է՝ ազգային գործերու և հաստատութիւններու բարեօք մատակարարութեան համար:

Տ. Մատթէոս Ս. Արքեպիսկոպոս Իզմիր-  
լեան, Առաջնորդ 1886—1890 (յետոյ երկիցս  
Պոլսոյ Պատրիարք և Հայրապետ ամենայն Հա-  
յոց) նշանաւոր եղած է իր օգտաշատ պաշ-  
տօնավարութեամբ. ազգային սնտուկը պարտ-  
քէ ազատած է, անոր հին և գրեթէ կո-  
րուստի մատնուած մեծաքանակ պահանջները  
գանձած է, և Աստուածածին Եկեղեցին ու  
«Հոգետուն»ը նորոգել և Պէնի Սուրէնի մէջ  
տուն մը ի հիմանէ կառուցանել տուած է :  
Կարապետ աղա Գալուստի կտակագիրն Ե-  
ղիպտական կառավարութեան ճանչցնել տա-  
լով՝ վարժարանին նիւթականը միանգամ ընդ-  
միշտ ապահովութեան տակ առած է :

Առաջնորդական այս պաշտօնին մէջ, Իզ-  
միրլեանի նշանաբանն եղած է, ինչպէս ար-  
դէն իր կսկծալի մահուան առթիւ հրատարա-  
կած ենք (\*) «Իրաւունքի տէր տկարն՝ անիրաւ-  
հզօրին դէմ ազդուապէս պաշտպանել . . . ,  
առաջնորդին հեղինակութիւնը նոյն իսկ ամե-  
նէն ջոջերուն դէմ բարձր պահել, Եղիպտոսի

---

(\*) Բիւզանդիոն, Յունուար 23 | 3 Փետրուար  
1911, թիւ 4341 :

վիճակին յատուկ վարչական հրահանգի ծր-  
րագիր պատրաստել ու կեդրոնին մատուցա-  
նել, պատահած գործերն ու խնդիրներն՝ ա-  
պագային կնճիռ և դժուարութիւն չյարու-  
ցանելու հեռատեսութեամբ հիմնապէս ու  
վերջնապէս կարգադրել, ծագելիք վնասա-  
կար ու անհաճոյ դէպքերը կանխատեսել եւ  
արգելիչ միջոցներ ձեռք առնել, Առաջնոր-  
դարանի վարչական անիւր կանոնաւորապէս  
հոլովելու վիճակի մէջ դնել, ղինք շրջա-  
պատող ժողովականներուն և իրեն հետ ծա-  
նօթութիւն հաստատողներուն վստահութիւն  
և պատկառանք ներշնչել և ամէնուն ըլլալ  
տոկուն, անխոնջ և արդիւնաւետ աշխատասի-  
րութեան նախանձելի օրինակը » :

Իսկ Իզմիրլեանի անարժաթ սիրութիւնն ա-  
ռածի կարգ անցած է Եգիպտոսի մէջ :

Տասնեւիններորդ դարուն մէջ ապրող բոլոր  
նշանաւոր Հայերու անուններն և անոնց գործե-  
րը շենք կրնար մէջ բերել այս համառօտագիծ  
պատկերին մէջ. մեր յիշածներէն զատ ան-  
շուշտ եղած են ուրիշներ ալ, որոնք դիրք ու  
համբաւ չինած են կառավարական պաշտօն-  
ներու և առեւտրական և ուրիշ ասպարէզնե-  
րու մէջ :

Թէեւ անդ զլական գրաւումին ոտնդած կացութեան բերմամբ՝ յուսայի չէ որ Հայերն որքան ալ հանճարեղ և դործունեայ ըլլան, ասկէ ետքը պետական ասպարէզին մէջ Պօղոս պէյի և Նուպար փաշայի գերին ու գիրքին բարձրութեան հասնողներ ունենան իրենց մէջ, սակայն և այնպէս այսօր կառավարութեան կարեւոր պաշտօններու գլուխը գտնուող Հայեր պակաս չեն։ Խառն Դատարանաց Նախնական և Վերաքննիչ Ստեաններու մէջ Հայերը չորս արթու ունին, կան Դիւաններու պետեր, թարգմանիչներ եւ այլն։

Այժմ կան նաև հանգ յատի կոչուած պետական պաշտօնատարներ, որոնց գլուխը կը գրտնուի Նազուպ փաշա Սրթին, երջանկայիշատակ Սրթին պէյ, Չրաքեանի արժանաւոր ու բազմահմուտ զաւակը։ Նորին Վսեմութիւնը պաշտօնէ պաշտօն բարձրանալով՝ երկար տարիներ կրթական Նախարարութեան Խորհրդական եղած է, մեծ դործունէութիւն ցոյց տուած և կարեւոր բարենորոգումներ ի դործ դրած է այդ Նախարարութեան մէջ։ Ներկայիս մէջ անդամ կամ գեր. նախագահ է գիտական մարմիններու, Նախագահ է Հայկաթուղիկ հասարակութեան Բարձրագոյն ժողովին։

Արդի ժամանակաց մէջ պետական ասպարէզներու մուտքը Հայոց համար հետզհետէ դժուար և հազուադէպ կը դառնայ : Հայերն, իրենք ալ կարծես առ այդ յաջողելու համար հարկ եղած ջանքերն ընելու հետամուտ չեն :

Եգիպտոսի Հայ գաղութն իր ծոցին մէջ կը համրէ քանի մը անուանի կալուածատէրներ և վաճառականներ, այս վերջինները տրպածոյի, կտաւի, նորաձեւութեան և նաւթի վրայ գործ կ'ընեն, կեդրոն ունենալով Գահիրէն և Աղէքսանդրիան : Ծխախոտի առետուրին մէջ առաջին տեղը բռնած են Հայերը : Հայկական Տուն մը տարին տասներկու միլիոն ֆրանք մաքս կը վճարէ կառավարական գանձին և մատակարարն է Գրաւիչ բանակին, ուրիշ Տուն մը մատակարարն է Սուտանի անգղիական բանակին : Հայ տուներ ծխախոտի մեծ գործարաններ ունին Կիզէ, Գահիրէ, Աղէքսանդրիա, Ասիութ, Զակաղիկ, Թանթա քաղաքներուն մէջ :

Կան բազմաթիւ Հայեր, որոնք հիւպատոսարաններու, դրամատուներու և ուրիշ կարեւոր վարչութիւններու և ընկերութիւններու մէջ դիւանապետի, թարգմանիչի, տումարակալի և ուրիշ պաշտօններ կը վարեն :

Իրենց մէջ կը գտնուին Եւրոպա ուսում առած երկրաչափներ, ճարտարապետներ, արուեստագէտներ, որոնցմէ մին եղիպտական և անգղիական գրաւիչ բանակներուն լուսանկարիչն է :

Եղիպտահայերու մէջ կը գտնուին քսանի չափ բժիշկներ ևս քանի մը փաստաբաններ . կը գտնուին դեղարաններու տէր վկայեալ դեղագործներ :

Անցելոյն մէջ Հայերուն հետամտած գրլխաւոր ասպարէզներէն մէկն եղած է սեղանաւորութիւնն, որու մէջ յաջողակ հանդիսացած են . ժողովրդեան միջին և յետին կարգերն հիմայ առեւտուրով, կօշկարութեամբ և ուրիշ արհեստներով կ'ըբազին :

Գահիրէի ու Աղեքսանդրիոյ, Ստորին եւ վերին Եղիպտոսի զանազան քաղաքներուն մէջ կը գտնուին առեւտրական և արհեստական շատ մը տուններ . հինէն ի վեր ոսկերչութեան մէջ ամէնէն յաջողակներն են և իրենց ձեռքի գործերը շատ յարգի են Խտիւական պալատին մէջ, որոնց մատակարարն երկար ատեն Հայերն եղած են :

Մուրատեանէ շատ տարիներ ետքը՝ տպագրական արհեստն իր հետեւողներն ունեցաւ

Եգիպտահայերուն մէջ . Գահիրէ և Աղէքսանդրիա բացուեցան տպարաններ, որոնցմէ մէկ քանին մինչեւ այսօր կը գործեն : Այդ տպարաններէն 20ի չափ գրքեր լոյս տեսած են յարդ . անոնց մէջ շէն պակսիր օգտակար եղողներ և գրական արժէք ունեցողներ : Հրատարակուած են նաեւ լրագիրներ և հանգէսներ՝ Նեղոս, Փարոս, Փիւնիկ, Արսեմիս, Պարսէզ, Հորիզոն և այլն, որոնց ամէնն ալ ասուպներու կեանքն ապրած են գժբաղդարար :

Գահիրէի Լուսաբերն և Աղէքսանդրիոյ Արեւն ի մի ձուլուելով եղած է այսօրուան Լուսաբեր-Արեւը . ասոր և Եգիպտոսէն Պոլիս փոխադրեալ Շիրակի հետ սերտիւ կապուած է անունն Արփիար Արփիարեանի, հայ գրականութեան հոյակապ և անմահ փառքերէն մէկը, որու թանկագին կեանքն շատ դառն և կակծալի է ըսել մեզ, եղբայրադու գընդակին զոհ գնաց երեք տարի առաջ ի Գահիրէ :

Մօտաւոր անցեալին մէջ Հայերն են որ արարերէն լրագիր և հանգէս՝ Էյ-Ջեմաև, Էյ-Մուշիր և Էյ-Ֆեշրահ հրատարակած են ի Գահիրէ և ֆրանսերէն ու անգղիերէն թերթերու խմբագրապետ և խմբագիր եղած են :



Մինչեւ 1895 Եգիպտոսի Հայերու ընդ-  
հանուր թիւը հազիւ երկու հազարի կը հաս-  
նէր . այդ թուականին և յաջորդ երկու տա-  
րիներուն մէջ թուրքիա պատահած աշխար-  
հածանօթ աղետալի դէպքերէն ետքը , որոնց  
ընդ գնացին աւանդ , հարիւր հազարաւոր հա-  
յերու կեանքը , մէկ բիւրի չափ Հայեր Պոլսէն  
և ուրիշ կողմերէ Եգիպտոս գաղթեցին : Հին  
գաղթականները նորեկներուն ապրուստին և  
տեղաւորման մասին ամէն կարելի միջոց ի  
գործ դրին և յայտնի ճշմարտութիւն մըն է  
թէ աշխարհի զանազան կողմերը ապաստանող  
Հայերուն մէջ , Եգիպտոս գաղթողներուն չափ  
դիւրութիւն և պաշտպանութիւն գտնողներ  
չեղան : Նոր գաղթականներէն քիչեր վերա-  
դարձան իրենց տեղերը :

Նոյն պաշտպանութիւնը վայելեցին նաեւ  
Կիլիկիեան գաղթականներն , որոնք երկու տա-  
րի առաջ՝ Ատանայի ջարդերէն մաղապուր Ե-  
գիպտոս ապաստանեցան . սակայն անոնց մե-  
ծամասնութիւնը վերջէն ետ դարձան իրենց  
տեղերը :

Կաթոլիկ Հայոց Առաջնորդ . փոխանորդ  
Դաւիթեան Գերապայծառ , անցեալ տարի  
հրատարակած իր մէկ ֆրանսերէն գործին

մէջ, 390 ընտանիք ցոյց կուտայ Եգիպտոսի  
կաթոլիկ Հայերու թիւը: Բողոքական Հա-  
յերու թիւն ալ 250 անհատէն աւելի չէ:

Եգիպտոսի Հայոց և կաթոլիկ ու Բո-  
ղոքական Հայոց այսօրուան ընդհանուր թիւի  
մասին հետեւեալ հաշիւը ճշգուծեան մօտ  
կ'երեւի մեզի. —

Գահիրէ և շրջակայք	7000
Աղէքսանդրիա և շրջակայք	4000
Զակաղիկ, Ասիութ, Ի. Շարքիյէ, Ման- սուրա, Մինիէ, Կուայլն	1000
	<hr/>
	12000

Հին գաղթականները մեծաւ մասամբ ա-  
րարախօս են և ծնունդ, հարսանիք և ննջեց-  
եալ ունեցած ատեննին կը հետեւին Խպտի-  
ներու սովորութիւններուն ու բարքերուն:

Նոր գաղթականներն եկած են գլխաւո-  
րաբար Պոլիսէն և կեսարիայէն. թիւով ա-  
տոնցմէ ետքն են Վան, Արաբկիր, Ատանա,  
Ակն, Իզմիր, Թոգատ, Սերաստիա և ուրիշ  
գաւառներէն եկողները: Ասոնք ընդհանրա-  
պէս հայերէն կը խօսին, թրքախօս քիչ կայ  
մէջերնին և առայժմ կը պահեն իրենց հայ-  
րենի երկրին բարքերն ու սովորութիւններն:

Ինչպէս Հայերն, անանկ ալ Հռոմէական Հայերն Եգիպտական կառավարութենէն պաշտօնապէս ճանչցուած են իբրև ուրոյն Հասարակութիւն, անոնց գլուխը կը գտնուին տեղական ժողովուրդէն ընտրուած, Պոլսոյ Պատրիարքարաններէն ընդունուած և Օսմանեան Սուլթաններու հրովարտակներով հաստատուած Առաջնորդներ :

Բողոքական Հայերը չունին յատուկ ազօթատեղի և մաս կը կազմեն զանազան ազգութեանց պատկանող և Եգիպտական կառավարութենէն « Աւետարանական » անունին տակ ճանչցուած համայնքին, ու իրենց հոգեւոր պաշտամունքը կը կատարեն այդ համայնքին պատկանող ազօթատեղիներու մէջ : Իրենց հանրային գործերն ալ Եգիպտական կառավարութենէն յիշեալ համայնքին համար յատկապէս տրուած օրէնքի մը համաձայն կը կառավարուին :

Եգիպտոսի Հայերն ժ.թ. դարու երկրորդ կէսին մէջ Երուսաղէմի հոգեւոր և վարչական իրաւասութենէն ելած և Պոլսոյ Պատրիարքութեան իրաւասութեան ենթարկուած են : Իրենց հանրային գործերը կը տնօրինուին 1863ին Երջանկայիշատակ Ապտիւլ Ազիզ կայսեր կողմէ

ամբողջ Օսմ. կայսրութեան Հայերուն համար տրուած սահմանադրական օրէնքին համաձայն: Այդ օրէնքի ոյժով Հայերն իրենց հանրային ներքին գործերուն մէջ ազատ են և իրենց Առաջնորդարանը կը վայելէ կարգ մը առանձնաշնորհումներ, որոնց մէջ կարելոր տեղ մը կը բռնէ Հայերու կողմէ եղած կտակներու հաստատութեան իրաւասութիւնը: Բաց աստի Հայոց Առաջնորդարանը ունի Եզխատական կառավարութենէն տրուած առանձնաշնորհումներ, որոնց համար արդէն խօսած ենք այս նօթերուն մէջ (եր. 29):

Մինչեւ 1907 Աղեքսանդրիոս «Թաղական Խորհուրդ» անունով մարմին մը ունէր, սակայն այդ մարմինն իրականին մէջ Քաղաքական եւ Երեսփոխանական Ժողովոց իրաւասութիւնն կը վայելէր և իբր այն ճանչցուած էր Պոլսոյ Պատրիարքարանէն ալ: Յիշեալ թուականին Պոլսոյ Պատրիարքարանի կողմէ Եզխատոսի վիճակին համար սլատրասուած վարչական Հրահանգի մը տրամադրութեան համաձայն, Աղեքսանդրիոյ մէջ ալ, Գահիրէի սէս, Ժողովրդական քուէարկութեամբ ընտրուեցաւ համարառու բարձրագոյն Մարմինն՝ այսինքն Երեսփոխանական Ժողով, որ կազմեց համարա-

տու վարչութիւնը՝ Կրօնական և Քաղաքական  
Ժողովներ: Եգիպտոսի ամբողջ վիճակին վե-  
րաբերեալ խնդիր մը ծագելուն՝ երկու քաղա-  
քաց Երեսփոխանական Ժողովներն համագու-  
մար նիստ կ'ընեն նախագահութեամբ Առաջ-  
նորդին, որ միանգամայն միւս բոլոր ժողովոց  
ալ նախագահն է:

Հռոմէական Հայերը 1905ին Եգիպտա-  
կան կառավարութենէն վաւերացեալ և կա-  
թոլիկ Հայոց Պօլսոյ առաջին Պատրիարքին  
տրուած Կայսերական հրովարտակին վրայ  
հիմնեալ կանոնագիր մը ունին, որուն համե-  
մատ կը կարգադրեն իրենց հասարակութեան  
վարչական ներքին գործերը:

Մխիթարական է որ երեք դաւանու-  
թեան պատկանող հայերը սիրալիր յարաբե-  
րութեան մէջ են իրարու հետ ու ազգային  
հանրային խնդիրներու մէջ մէկմէկու ձեռնաու  
և օգնական:

Գահիրէի Հայ Ժողովուրդը, ինչպէս ըս-  
ուեցաւ արդէն 1839ին կառուցուած Ս. Սատ-  
ուածածին անունով եկեղեցի մը ունի, Պէնի  
Սուրէնի թաղին մէջ, Առաջնորդարանի կից:

Հայերն ունին նաև մատուռ մը հին գե-  
րեզմանատան մէջ 1843ին Գաբրիէլ Ս. Եպիս-

կոպոսի առաջնորդութեան օրով և Ս. Մինասի  
անունով շինուած, բարեպաշտ ժողովուրդին  
արդիւնքով և «... պոլսեցի խոհեմափայլ Պօղոս  
Վարդապետի ձեռնտուութեամբ», ինչպէս  
կըսէ յիշատակարանը (\*):

---

(\*) Այս մատուռէն քանի մը քայլ հեռի, դէպ  
ի հարաւ, գետնին մէջ կրտսովին թաղուած բաց  
դուռ մը կայ. այդ դռնէն ներս մտնողը ուրիշ  
փոքրիկ և բոլորովին մերկ մատուռի մը չորս  
պատերուն մէջ կը գտնէ ինքզինքը:

Զրոյցի մը նայելով, ժե. դարուն Սուլթան  
էշրէֆ այդ մատուռը, որ մինչեւ այսօր դոյու-  
թիւն ունեցող Սպտի կից եկեղեցիին մաս կը կազ-  
մէր այն ատեն, Հայոց տուած է. որպէս զի այդ  
միջոցին եգիպտոս գանուող Հայոց կրօնապետն  
աղօթելու և պատարագելու տեղ մը ունենայ:

Հայերը հալածանաց օրերուն մէջ, ուր Քրիս-  
տոնէից արգելուած էր եկեղեցւոյ շէնքը գետնի  
մակերեւոյթէն վեր բարձրացնել, իրենց հոգեւոր  
պաշտամունքն այդ գետնափոր մատուռին մէջ  
կատարած ըլլալու են երեք հարիւր տարիէն ա-  
ւելի ժամանակ:

Կը կարծենք որ Հայերն միւսնայն ժամանակ  
տէր եղած են թէ այդ մատուռին և թէ հին գե-  
րեզմանատան:

Հին գերեզմանատան հիւսիսի կողմն է նոր գերեզմանատունն, որոնց երկուքն ալ ի գործածութեան են այսօր: Երկու գերեզմանատուններն անցքով մը հաղորդակցութեան մէջ են իրարու հետ: Նոր գերեզմանատունը, ժամանակին բլուր մը, նուիրուած է յաւերժական յիշատակաց արժանի Մուհամմէտ Ալի փոխարքայէն: Հարթուելէն յետոյ երկար ատեն վարձու տրուած է իրրեւ բանջարանոց: Հազար ութ հարիւր ութսուն և հինգէն ասդին է որ ննջեցեալներ կը թաղուին հոն:

Հայերը քսան տարիներէ ի վեր սեպհական գերեզմանատուն ունին նաև ի Զակաղիկ:

Մեր կաթողիկ եղբայրներն ալ Գահիրէի մէջ ունին Առաջնորդարան և Ս. Գրիգոր Լուսաւորչի անունին ձօնուած եկեղեցի մը՝ 1841ին կառուցուած. ունին նաև յատուկ գերեզմանատուն՝ մատուռով:

Աղեքսանդրիոյ Հայերը նախապէս վերնատան մը մէջ կը կատարէին իրենց հոգեւոր պաշտամունքը, սակայն 1883էն ասդին ունին իրենց յատուկ եկեղեցին, ինչպէս ըսուեցաւ Յակօբեան փաշայի վրայ խօսուած ատեն:

Այս եկեղեցին շինուած է «յանուն առաքելոցն Պետրոսի և Պօղոսի, արդեամբ կալ-

ուածոց նուիրեալ ազգին ի մեծանուն Պօղոս պէյէ Եուսուֆեան, ի յիշատակ հոգւոյ նորին» :

Կաթոլիկ Հայերն 1890ին ունեցան իրենց առաջին մատուռն յԱղեքսանդրիա, սակայն պզտիկ ըլլալուն համար քանդուեցաւ ու խաւիլ փաշա Խայեաթ և եղբայրը Նասրի պէյ ուրիշ աւելի ընդարձակ մը շինել տուին իրենց ծախքով :

Աղեքսանդրիոյ թէ Հայերն և թէ Կաթոլիկ Հայերն ունին գերեզմանատուն . իսկ մեր բողոքական եղբայրները թէ՛ ի Գահիրէ և թէ յԱղեքսանդրիա իրենց դաւանակից օտարազգիներու գերեզմանատան մէջ կը թաղեն իրենց ննջեցեալները :

Գահիրէի մէջ կարապետ աղա Գալուստի կառուցած վարժարանը կէս դար գործածութենէ յետոյ հինցած էր և անբաւական կու գար տղոց յարաճուն բազմութեան . միջավայրն ալ հետզհետէ անյարմար և հակառողջական դարձած էր : Ճիշդ այս միջոցին էր որ վսեմ. Պօղոս փաշա Նուպար, արդի Ս. Առաջնորդ Գեր. Տ. Մկրտիչ Ս. Եպիսկ. Աղաւնունիի օրով 1904ին, Մասրուֆ թաղին մէջ ընդարձակ գետին մը գնեց, մանչերու և աղջ-



կանց համար զատ զատ, սակայն իրարու կից երկու վարժարան շինել տուաւ և նուիրեց ազգին: Մանչերու վարժարանին վրայ մասնաւոր յարկ մը շինուած է Առաջնորդի բնակութեան համար. այդ յարկին մէջ կը գտնուի Երեսփոխանական ժողովոյ գումարման սրահը: Գետին եւ շէնք արժած են 16 հազար ոսկի: Ն. Վսեմութիւնը այդ թուականին կարեւոր դրամագլուխ մըն ալ վեհանձնաբար յատկացուց և անոր արդիւնքով Գալուստեան և ուրիշ վարժարաններու շրջանաւարտ աշակերտները կը պաշտպանէ Եգիպտոսի ու Եւրոպայի բարձրագոյն վարժարանաց մէջ:

Մաարուֆի յիշեալ նորակառոյց վարժարանաց շրջափակին մէջ, դարձեալ արդի Ս. Առաջնորդին օրով 1908ին, Մանկապարտէզ մը կառուցուեցաւ, գետնի ու շէնքի 6000 ոսկիի ծախքը հոգացուելով հանգանակութեան մը արդիւնքէն և ազգային սնտուկէն: Այս և Պէնի Սուրէնի Մանկապարտէզն ունին երեք տարուան շրջան, իսկ վարժարանները՝ նախակրթարանի ընթացք վեց տարուան շրջանով, երկու տարի ալ լրացուցիչ դասընթացք: Մանկապարտէզներու և նախակրթարանաց մէջ

Կուսանին հիմայ 360 երկսեռ աշակերտներ :  
Մանկապարտէզներու և նախակրթարանաց  
ծախքն է իբր 2000 եգ. ոսկի, որ գրեթէ  
ամբողջապէս կը հայթայթուի կարապետ  
Քալուստի կտակած արտերու եկամուտներով :

Աղեքսանդրիոյ Հայերն ունին տարրական  
նախակրթարան մը 8 տարուան շրջանով, որու  
ուսումնական մակարդակը քիչ մը բարձրացնե-  
լու մտադրութիւն կայ այս միջոցին : Տարե-  
կան ծախքն է 1775 եգ. ոսկի<sup>(\*)</sup>, որուն 100ը  
Պօղոս փաշա Նուպար կը նուիրէ և 160ը տղոց  
թոշակներէն կը գոյանայ, մնացեալն ազգա-  
յին սնտուկը կը հոգայ, ինչու որ վարժարանն  
իրեն սեպհական կալուած չունի : Կուսանին  
420 երկսեռ աշակերտներ :

Տխուր է խոստովանիլ թէ Աղեքսանդրիոյ և  
մանաւանդ Գահիրէի վարժարաններն իրենցմէ  
սպասուած ծառայութիւնը զանազան պատ-  
ճառներով չեն կրցած մատուցանել լրիւ : Ա-  
ղեքսանդրիոյ վարժարանն արդիւնաւոր շրջանի  
մը մէջ մտած ըլլալու յոյսեր կը ներշնչէ  
վերջերս. եւ ջերմապէս կը մաղթենք որ

---

(\*) Մէկ եգ. ոսկին կ'արժէ 113 Օսմ. դրշ.  
գրեթէ. = կամ 26 ֆրանք = կամ հինգ տուար :

այդ յոյսերն իրականանան մօտ ապագայի մէջ  
և Գահիրէի վարժարանը բաղձացեալ վիճակի  
մէջ դնելու համար ազգային պաշտօնական  
չրջանակի մէջ եղած լուրջ ջանքերն և ձեռք  
առնուած ու փորձառութեան թելադրած  
նպատակայարմար միջոցները կատարեալ յա-  
ջողութեամբ պսակուին . ինչու որ Եգիպտոսի  
հայ վարժարաններն եթէ չի կրնան իրենց  
կոչման և դերին բարձրութեան մէջ մնալ ,  
Նեղոսի հովտին մէջ ապրող Հայութիւնը , ըստ  
մեր խոնարհ կարծեաց , ոչ կամ կանուխ  
կորսուելու դատապարտուած է :

Այս ճշմարտութիւնը խորապէս ըմբռնած  
կերեւան Զակաղիկի ափ մը հայերն , որոնք  
հայ կեանքը , հայ լեզուն , հայ պատմու-  
թիւնը իրենց զաւակաց սովրեցնելու համար  
քանի մը տարիներէ ի վեր պղտիկ վարժարան  
մը կը պահեն հոն :

Կաթողիկ ու բողոքական հայերը Եգիպ-  
տոսի մէջ յատուկ վարժարան չունին և ա-  
տոնցմէ ոմանք իրենց զաւակները Հայոց վար-  
ժարանները կը դրկեն :

Գահիրէի մէջ մինչեւ 1897 թուականը  
անչարժ կալուածներու հասոյթներն եւ ու-  
րիշ եկամուտները մէկ սնտուկի մէջ կ'ամ-

փոփուէին և ազգին զանազան հաստատութեանց — Եկեղեցի, Վարժարան, Առաջնորդարան, Աղքատաց Խնամակալութիւն և Գերեզմանատուն. Մատուռ — անխտրաբար կը բաշխուէին, իւրաքանչիւրին իր պէտքին համեմատ : Այդ թուականին ընդունուեցաւ եւ գրեթէ անխօփօխ գործադրուիլ սկսաւ սասկզբունքը թէ կալուածներուն հասոյթները ծախսուելու է ա՛յն հաստատութեանց համար միայն, որոնց անունով որ ելած են կալուածագիրերը : Ուրիշ եկամուտներն ալ յատկացուեցան այն հաստատութիւններու, որոնց անունով տեղի կ'ունենան գանձումները :

Վարժարանի կալուածներ նուիրող վեհանձն բարերարին անունը քանիցս յիշատակեցինք գործիս ընթացքին մէջ. մասնաւոր յիշատակութեան արժանի է նաև Փոխարքայ Սայխափաշա (\*), որ երկու կտոր՝ 1000 ֆէտտան տա-

---

(\*) Սայխափաշա Մուհամմէտ Ալիի չորրորդ զաւակն էր, և եղաւ Եգիպտոսի չորրորդ փոխարքան. իշխած է ինը տարի, (1854—1863) : Խնամեալ դաստիարակութիւն մը ստացած էր : Երկրին վարչութեան մէջ շատ օգտակար բարեկարգութիւններ մտցուց, տուրքերը արդար կերպով բաշխեց, մենաշնորհները ջնջեց և հասարա-

րաժութեամբ արտեր նուիրած է աղքատաց  
անունով. այս արտերն այսօր 2356 էգ. ոսկի-  
էն աւելի զուտ հասոյթ կ'արտադրեն տարին :

Բարեյիշատակ վանեցի Գրիգոր Վարդա-  
պետ ալ Առաջնորդարանի կից մեծ տուն մը  
նուիրած է, որու վերնայարկին մէջ հաստատ-  
ուած է Առաջնորդարանի դիւանատունն անց-  
եալ տարու ընէ ի վեր :

Առաջնորդարանն ի մէջ այլոց ունի արտ մը,  
որ 1889ին գնուած է ողբացեալ Տիկին Զիպա  
տ'Ապրոյի ժառանգութեան կարգադրութեան  
առթիւ գանձուած գասեմիյէի 70 հազար  
Քրանքի դրամով :

Եկեղեցին ու գերեզմանատուն մատուռը  
ներկային մէջ հասութարբեր անշարժ կալուած-  
ներ չունին գրեթէ :

Նուպար փաշայի նախարարապետութեան

---

կաց օգտակար շատ աշխատութիւններ ի գործ  
դնել տուաւ : Աղեքսանդրիան սնուցանող Մահ-  
մուտիյէի ջրանցքը ինք բանալ տուած է : Մեծ  
ոյժ տուած է նաև բացման Սուէզի ջրանցքին, որ  
Եւրոպան միացուց Ծայրագոյն Արեւելքին : Այս  
ջրանցքին հիւսիսի կողմը շինուած քաղաքն իր  
անունով Փոր-Սայիտ (Սայիտի նաւահանգիստը)  
կոչուած է :

օրով՝ իբր 30 տարի յառաջ՝ Եգիպտական  
կառավարութենէն Գահիրէի եկեղեցիին 1000  
և Աղեքսանդրիոյ եկեղեցիին 500 Ֆէտտան  
անմշակ հող նուիրուած է Պեհերայի նահան-  
գին մէջ : Կարելի է այդ հողերը վաճառել և  
կամ ապագային մէջ հասութարբեր ընել :

Եգիպտոս Հայերուն մէջ ընկերութիւններ  
պակաս եղած չեն երբէք : Գահիրէի ու Աղեք-  
սանդրիոյ մէջ կան Աղքատախնամ ընկերու-  
թիւններ . մեծ ջարդերէն ետքը Գահիրէի մէջ  
կազմուեցան Ողբախնամ ընկերութիւններ , ո-  
րոնք իրենց կարողութեան սահմանին մէջ  
խնամեցին բնագաւառի ծնողազուրկ փոքրիկ-  
ներէն մէկ քանի խումբեր : Լսարան և Ընթեր-  
ցատան համար եղած են և կան ընկերութիւն-  
ներ , որոնք ունեցած են փայլուն շրջաններ և  
ներկային մէջ շատ բաղձալի է որ անոնք ա-  
ւելի բարգաւաճ վիճակ ունենան :

Եղած են նաև անցեալին մէջ յեղափո-  
խական ու ներկային մէջ քաղաքական ընկե-  
րութիւններ :

Ընկերութեանց տեսակէտով , հաղար ինը  
հարիւր վեց Ապրիլ 15ի Ա. Չատկի օրը շատ  
նշանաւոր օր մը եղած է : Այդ երջանիկ թը-  
ւականին էր որ Գահիրէ Պողոս փաշա Նուպա-

րի բնակարանին մէջ, Նորին Վսեմութեան հրաւերով տասն ազգասէր Հայեր կը հաւաքուէին անոր նախագահութեան տակ և հիմը կը դնէին Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան, որու նպատակն է ասիաբնակ Հայ ժողովուրդին մտաւոր և բարոյական զարգացման նպաստել, անոր նիւթական և տնտեսական կացութիւնը բարւոքելու աշխատիլ և առ այս ո՛ր և է ձեռնարկ կամ հրատարակութիւն քաջալերել :

Միութիւնն այսօր Ամերիկայի, Թուրքիոյ, Եւրոպայի և ուրիշ տեղերու մէջ ութսունի չափ մասնաճիւղեր և 4000էն աւելի անդամներ ունի և օրէ օր զարգանալու վիճակին մէջ է :

Հայկական Ընդհանուր Միութիւնն Հայ ազգին ճակատագրին վրայ մեծ դեր խաղալու կոչուած է : Եւ իր գոյութեան հնգամեայ կարճատև շրջանին մէջ այդ ուղղութեամբ գնահատելի ծառայութիւններ մատուցած է արդէն : Հայաստանի և Կիլիկիոյ կարօտ և արկածեալ շատ մը վայրերու մեր եղբարց ու քերց՝ առանց կրօնի խտրութեան՝ 16000 Եգ. ոսկի նպաստ ղրկելէ զատ, այսօր 21500 ոսկի ալ պատրաստ դրամագլուխ ունի : Միութիւնը Հայաստանի մէջ 20 վարժարան-

ներ բացած և անոր հսկողութիւնը Պոլսոյ Միացեալ Ընկերութեանց յանձնած է :

Մեծ հաճոյքով կ'արձանագրենք Միութեան բարերարներուն անուններն՝ վսեմ. Պողոս փաշա Նուպար, Աբրահամ փաշա Բարթող, Տիգրան Խան Քէլէկեան, որոնք հազարական սկի նուիրած են, և հոգելոյս Գրիգոր էֆ. Մէօթէմէտեան որ իր մահէն քիչ առաջ կտակագրով մը 3000 սկի արժող մը շակելի հողեր ձգեց Եգիպտոսի մէջ, որպէսզի Միութիւնն անոր արդիւնքով իր ծննդավայր թողատ քաղաքին մէջ Մէօթէմէտեան անունով վարժարան մը հիմնէ ու կառավարէ :

Հիմնարկութենէն ի վեր Միութեան Նախագահն է վսեմ. Պողոս փաշա Նուպար եւ դեր-նախագահներն վսեմ. Եագուպ փաշա Արթին և Երուանդ պէյ, Աղաթօն՝ ղաւակ Աղգային Սահմանադրութեան խմբագիրներէն հռչակաւոր Գրիգոր էֆ. Աղաթօնի, որ իր ընկերներուն հետ շատ մեծ ջանք և անձնուիրութիւն ունեցած է Միութեան յառաջդիմութեան համար :

Կեցցէ, յաւէտ կեցցէ Միութիւնը :





Յ Ա Ի Ե Լ Ո Ի Ա Մ





## ԿԱՐԱՊԵՏ ԳԱԼՈՒՍՏ

Կարապետ Գալուստ վասպուրական աշխարհի վան քաղաքէն էր. իր ծնունդը, տապանաքարին վերտառութեան նայելով 1802ին պատահած է, բայց ինչ ժամանակցաց ու ցարդապրող իր ազգականաց վկայութեան համեմատ՝ աշխարհ եկած է հասանորէն 1790ին:

Իր ընտանիքին անունն էր Հանրմեան կամ Հանրմ Օղլու. հայրը քահանայ էր և կը կոչուէր Տէր Գալուստ. իսկ մօրն անունն էր Մարիամ:

Մանուկն Կարապետ ժիր և անձնեայ, օժտուած էր սրտի և մտքի ազնիւ յատկութիւններով և կը յաճախէր տեղւոյն ազգային վարժարաններն, ուր կ'ուսանի Հայերէն ընթերցանութիւն ու գիր, կը վարժուի սահուն

կերպով խօսելու մայրենի ու պետական լեզուներն ։

Կարապետ հազիւ վարժարանէն հրաժարած ու գործի ձեռնարկած՝ ծնողքին կամօպ համեմատ կ'ամուսնանայ ազնիւ գերդաստանէ աղջկան մը Օր. Պէկզատէի հետ ։

Կարապետ կաթողին կը սիրէր իր ծնողքն , նոր հարսն ու հայրենիքն , բայց շատ շանցած նիւթական պատճառներով , կ'ստիպուի բաժնուիլ իր սիրելիներէն և իր գործի մարդու բնազդէն ու ձիրքերէն թելադրեալ կուգայ կը հաստատուի ի Գահիրէ , ուր կանխած էր զինք իրեն երեց եղբայրն Խաչատուր և որ այն ատեն , ինչպէս հիմայ , իր ծոցին մէջ ունէր զանազան ասպարէզներու մէջ փայլող բազմաթիւ հոյակապ հայրենակիցներ , որոց մէջ նշանաւորներէն էին որբերու կառավարութեան անտուկի Տնօրէն Ալիքսան աղա Եղիազարեան և Եղբայրն Յակօբ աղա , բնիկ Ակնցի ։ Ալիքսան աղա կը սիրէր իր հովանին ու պաշտպանութիւնը տարածել հայրենի երկրէն նորեկ ազգակիցներու վրայ , մանաւանդ ելբ տեսներ անոնք ճարպիկ ու աշալուրջ , ինչպէս էր Կարապետ Հանմեան , որ Եգիպտոս գալէն ետքը իր հօր անունով կոչուեցաւ Գալստեան , հա-

մեմատ երկրին մէջ տիրող սուրբութեան մը ,  
որ կը յարգուէր նորեկներու շատերու կող-  
մէն . շատ շանցած կարապետ Գալուստ վար-  
ժուելով խօսակցութեան արարերէն լեզուի ,  
որու գրականը յետոյ մշակեց , մտաւ ի ծա-  
ռայութիւն Եղիազարեանց , որոնք վերոյիշեալ  
պաշտօնէն զատ կառավարութեան հետ ուրիշ  
կարեւոր գործեր ալ կ'ընէին : Կարապետ շը-  
նորհիւ իր խնայասիրութեան և գործունէու-  
թեան , քիչ ժամանակի մէջ զգալապէս բար-  
ւոքեց իր նլութական վիճակն և Եգիպտոս  
բերել տուաւ իր հայրն և ամուսինն . այս վեր-  
ջինն վաղամեռիկ եղաւ , շկրնալով համաճայ-  
նիլ Եգիպտական ուստանին՝ իրեն համար նոր  
և անսովոր պայմաններուն և կրելով իր սրտին  
մէջ հայրենիքի սիրոյ տոչորող հուրն , ինչպէս  
կը հաստատէ սրտառուչ և յոյժ ներբողական  
արձանագրութիւնն որ քանդակուած է իր  
շիրմին վրայ 1883 Սպրիլ 1 թուականով :  
Պէկզատէէ առաջ վախճանած էր տագրը ,  
յիշեալ Խաչատուր : Տէր Գալուստի մահն եւս  
պատահած է ի Գահիրէ և մարմինն՝ միւս-  
ներուն պէս՝ ամփոփուած է Գալստեան գեր-  
դաստանի թաղին մէջ , ի Մարմինա , մատու-  
ռին կից , արեւելեան կողմը : Իր գերեզմա-

նին վրայ եւս զւտեղուած է մարմարեայ համետ շիրիմ փառաւոր վերտառութեամբ, որ ժահանաչի աւերիչ ընթացքին մէջ, մասամբ անընթեռնի վիճակ մը ստացած է այսօր:

Կարապետ Գալուստի սիրելիներու յաջորդական մահերն խորտակեցին անոր սիրտն, բայց ան վայրկեան մը չը թուլցաւ իր պաշտօնին պարտականութեանց մէջ, իր դիրքն ալ աւելի փայլեցաւ. Եղիազարեանց ծառայութենէն հրաժարած և անոնց ընկեր եղած էր 1840ին (1256) Էլ-Մաթարիյէի կառավարական ազահանքն շահագործելու համար: Այս միջոյններուն կեքած է Կարապետ ազա իր երկրորդ ասուանութիւնն Պոլսեցի Օր. Արուս Զարչամպալեանի հետ: Այս երկրորդ ասուանութիւնն առաջնոյն պէս ամուլ չմնաց. Կարապետ ազա երեք դաւակներ ունեցաւ Տիկին Արուսէ. բայց դժբաղդաբար երեքն ալ իրենց ծաղիկ հասակին մէջ թառամեցան մահուան խորշակէն: Կարապետ ազա Եգիպտական կառավարութենէն վարձեց նաև Տամիյէթի ձկնարանն և ունեցաւ անոր հետ ուրիշ կարեւոր գործեր: Իր ազգեցութիւնն շատ մեծ էր Վերին Եգիպտոսի մէջ, Մուհամմէտ Ալի և Իպրահիմ փաշաներու իշխանութեան

օրով . իր ընտանեաց մէջ պատմութեամբ զրոյցի մը նայելով՝ կարապետ աղա արտօնութիւն ունէր շոգենաւակին (տահապիյէ) մէջ թնդանօթ կրելու , որ կ'արձակուէր երբ մօտենար քաղաքի մը և տեղական կառավարութիւնը կը փութար իր մեծարանքի հաւաստիներով շրջապատել փոխարքաներու սիրելի նաւորդը . նոյն զրոյցին նայելով անգամ մը կարապետ Գալուստ , փոխարքայ Իպրահիմ փաշայի հետ վերին եգիպտոս կ'երթայ՝ կառավարութեան սահանջներու գանձումին համար և երբ պարտական գլուղացիներն ամէն միջոցներու առջև անտարբեր կը մնան ու չեն ուզեր պարտքերնին վճարել և ունեցածնին կը պահեն , անոնց մերկ մարմիններուն ձիւթ քսել և արեւուն գէմ անութներնուն տակէն կախել կուտայ՝ վրձարման ստիպելու համար զիրենք : Իպրահիմ փաշա կը տեսնէ այս բանը և դիտողութիւն կ'ընէ կարապետ աղայի , որ կը պատասխանէ «Բարձրապատիւ Տէր , եթէ այնպէս չընենք , չենք կրնար մէկ դանկ գանձել» . և Նորին Բարձրութիւնը ժպտելով կ'ըսէ . «Ըրէ՛ ինչ որ կ'ուզես , միայն զգուշացիր մահ պատճառելէ» :

Հաղար ութ հարիւր քառասունըեօթին վերջերը Մուհամմէտ Ալի փաշայի թոռն Սպ-

պաս պէյ Հիլմի, որդի վախճանեալ Թօսուն  
վաշայի, հալածանաց ենթարկուելով կ'ստիպ-  
ուի աճսպարանօք թողուլ եղիպտական հողն  
և քովը պատրաստ դրամ չունենալով Ալիք-  
սան աղա Եղիազարեանի կը դիմէ փոխառու-  
թեան համար համար. Ալիքսան աղա կը մեր-  
ժէ: Այն ատեն Ապպաս բաշա կը դիմէ Կա-  
րապետ աղա Գալուստի, որ սիրայօժար կ'ըն-  
դունի անոր առաջարկն և կը հայթայթէ ու-  
զածին չափ դրամ: Կարապետ աղայի այս փո-  
խատուութիւնը նշանաւոր արիութեան և մի-  
անգամայն վեհանձնութեան գործ մը կը նը-  
կատուի իշխանազուն փոխառուէն, որ երբ  
քանի մը ամիս չքոլորած, 1848ին, կը կոչուի  
վախճանեալ Իպրահիմ վաշայի յաջորդելու  
Եղիպտոսի փոխարքայական գահուն վրայ, կը  
յիշէ Կարապետ Գալուստի այն գործն և ոչ  
միայն կը վերադարձնէ առած դրամը, այլ և  
հետզհետէ կուտայ անոր ժամանակին առաջ-  
նակարգ ադամանգաղարգ պատուանշանը,  
անսահման վարկ Ելեւմտից պոչտօնատունէն,  
Փողերանոցի տեսչութիւնը, զոր Կարապետ  
Գալուստ կը վարէ ամբողջ երեք տարի, իր  
իրաւասութեան տակ ունենալով այնպիսի օ-  
տարազգիներ, որոնց յաջորդներն այսօր Գա-

հիրէի մէջ շատ նշանաւոր դիրքեր գրաւած են . մէկ խօսքով Ապստոս փառայի իշխանութեան բովանդակ շրջանին մէջ՝ 1848էն 1854՝ կարապետ աղայի աստղն ամէն ժամանակէ աւելի փայլած է , թէեւ անգամ մը քիչ մնաց նսեմանար այդ փայլն և ինք աքսորուէր թիւրիմայութեան մը սլատճառաւ . միջամտութիւնը փոխարքային բժշկապետ Բռնէլ սլէյի՝ ճշմարտութիւնը անպատրուակ պարզեց Նորին Բարձրութեան և վտանգը հեռացաւ կարապետ աղայի գլխէն , որ մինչեւ իր մահը մնաց պատուի և բարձի մէջ :

Կան ազգակիցներ — և այնպիսիներու թիւը դժբաղդաբար նուազ չէ — որ երբ բազդը ժպտի իրենց ու տէր ըլլան դիրքի և համբաւի , կը մոռնան իրենց ազգն ու հայրենիք , կ'արհամարհեն ինչ որ տոհմային է , ինչ որ հայկական է : Կարասպետ Գուրուստ ընդհակառակը քանի բարձրանար , այնքան կը մօտենար ազգին , այնքան կը սիրէր ազգային հաստատութիւններն : Անգամ էր Հայ Աւագածողովին , որ առաջնորդ Գաբրիէլ Սըրբազանի հետ կը տնօրինէր ազգային խնդիրներն և կը վարէր ազգային հաստատութիւններն . այս Աւագածողովն էր որ 1854 Յուն-



ուար Վին կանոնագիր մըն ալ պատրաստած է վարժարանի, Եկեղեցւոյ, Գերեզմանատան, Առաջնորդարանի, ժառանգական և ուրիշ գործոց մատակարարութեան համար, ու կարապետ Գալուստ այդ կանոնագրի ներքե ստորագրած և կնքած է ամէնէն պատուաւոր տեղը՝ Առաջնորդէն յետոյ: Ազգային բոլոր հաստատութեանց մէջ կարապետ Գալուստի սրտին ամէնէն մօտիկը վարժարանն էր. կը պատկանէր այն դպրոցին՝ որ վարժարանը Եկեղեցւոյ գաւիթը կը դաւանին և շէն ընդունիր բարոյապէս պայծառ եկեղեցի առանց բարոյապէս շէն վարժարանի: Այս մտածութենէն թելադրեալ՝ բաւ եւ շատ համարած է 1839ին Ս. Աստուածածին եկեղեցւոյ կառուցման ժամանակ՝ 2000 Քրանքի նիհար նուիրատուութիւն մը և քանի մը տարի յետոյ նորոգութեանն առթիւ ու իր անձնական քրակէն ոսկեզօծ խաչկալներու և աւագ խորանին սիւներուն շինութիւնը. իր բովանդակ ուշն ու զուրուշն գրաւած էր ազգային կրթութեան կենսական խնդիրն և վիճակն անոր հետ աւելուծանելի կերպով կապուած վարժարանի շէնքին, որ այն ատեն հիմակուան քահանայատան յարկն էր Ս. Աստուածածին եկեղեցւոյ արեւելեան

կողմը, 1828ին կառուցուած ի յիշատակ հող-  
ւոյ Ա. կնցի Եղիազար բարեհաւքաւ Ամիրային :  
Կարապետ Գալուստ, որ իր բարի գործոց  
մասին խորհրդակից ունէր Գաբրիէլ Սրբա-  
զանը, ժամանակին պահանջումներուն համա-  
պատասխան կրթանուէր յարկ մը իր անձնա-  
կան քսակէն շինել տալու դիտաւորութիւնը  
կը յայտնէ Նոբին Գերապատուութեան, եւ  
վայրը կ'որոշուի Տարպէլ-կինենա, որ Ս. Եկե-  
ղեցւոյ մօտ և այն ատեն Գահիրէի առաջնա-  
կարգ թաղերէն մին էր : Տարպէլ-կինենայի  
մէջ Երուսաղէմի Ս. Յակոբայ վանքին սեպ-  
հական ընդարձակ տուն մը կար, տարիներ  
առաջ հրդեհէ մը աւերակ դարձած . այս մի-  
ջոցին Եգիպտոս Երուսաղէմի Պատրիարքու-  
թեան վիճակն էր և անոր բոլոր այստեղի կալ-  
ուածներուն մատակարարութիւնն ազգային  
Առաջնորդարանի ձեռքն էր, որու պետն ալ  
Գաբրիէլ Սրբազան, Ս. Երուսաղէմի փայլուն  
(ոչ ուսումնական տեսակէտով) միաբաններէն  
մէկն էր . հետեւաբար առանց ոեւէ դժուա-  
րութեան յիշեալ աւերակ տեղը կը դրուի  
Գալստեանի տրամադրութեան տակ՝ կառու-  
ցանելու իր մտադրած կրթական շէնքը, որ  
կ'սկսի և կը վերջանայ 1854ին, 20,000 ֆը-  
րանքի ծախքով մը :

Կարապետ Քալուստ ո՛չ վարժարանի կառուցումին ատեն և ո՛չ յետոյ անոր ի նպաստ մեծ կտակ մը ըրած ժամանակ, չպահանջեց ընաւ որ վարժարանը իր անունով կոչուի: Վեհանձն որոշումով մը, որ մեծ պատիւ կը բերէ իրեն և որ իր խորհելու եղանակին վրայ պայծառ գաղափար մը կուտայ միանգամայն, փափաք յայտնեց որ վարժարանը նուիրուի քերթողահայր Մովսէս Խորենացիի անունին, ա՛յն Խորենացիին, որ հայ դպրութեան և պատմութեան հայրն եղած է. սակայն իր ժամանակին անխիղճ եկեղեցականաց նախանձնու մախանք զանի հալածած են մինչեւ գերեզման և գերեզմանէն ալ անդին՝ ոսկերոտին հանել ծովը թափել տալով:

Ահաւասիկ այս հալածեալ բայց բազմերախտ և հոյակապ անուան ձօնուած վարժարանին յիշատակարանն, որ ընտիր գրաբար է.

« Շնորհիւն Ասուծոյ ի հիմանց կառուցաւ Վարժարանս յանուն քերթողահօրն մերոյ Մովսէսի Խորենացւոյ արդեամբ եւ ծախիւք Վանեցի ազգասէր Կարապետ աղայի Տ. Քալստեան՝ ի յաւերժական յիշատակ յուսահոգի հօրն Տ. Քալուստին եւ մօրն Մարիամայ եւ յորքօրն Խաչատրոյ եւ համօրէն ննջեցելոց իւրոց եւ կենդանեաց, ի վայելումն եւ

ի բերկրութիւն մանկսւոյ Արամեան տնիմիս, որ յԵգիպտոս, ի բարոյական յուսումնական վարժագիտութեան» : (\*)

« Յամի Տեառն 1854 Սեպ. 15 » :

Եւ այս թուականին շքեղ հանդէսով մը կը բացուի նորակառոյց երկսեռ վարժարանը, ուր կը փոխադրուին հին «գպրատան» աշակերտներն ալ :

Այս տարին էր որ Գալուստ-Եղիազարեան Լիւ-Մաթարիյէի ընկերութիւնն լուծուեցաւ, թողլով կէս միլիոն ֆրանքի հաշիւ մը, առարկայ վէճի (\*\*):

Կարապետ Գալուստ վարժարանի նիւթա-

---

(\*) Խորէնեան վարժարանը 1897 Մայիսէն ի վեր Գաւ. Պատ. Ընդհ. Ժողովոյ սրտչման համաձայն, կը կոչուի Գալստեան. հիմնադիր-բարերարին անուանով : Յիշատակարանն սակայն անփոփոխ կը մնայ շէնքին ճակատը :

(\*\*) Այս վէճը ընկերներու մահէն քանի մը տասնեակ տարիներ յետոյ, 1892ին, տեղի տուաւ Առաջնորդարանի դէմ մեծ դատի մը, որ հետեւեալ տարին Աղեքսանդրիոյ Խառն Վերաքննիչ Դատարանէն վերջնապէս վճուուեցաւ ի նպաստ ազգին :

կան շէնքը բարձրացնելէ յետոյ, կը մտածէ անոր բարոյական շէնքի մասին, որ ապաքէն խորին ուշադրութեան արժանի էր, քանի որ այն ատենուան ազգային եկամտներէն հազիւ 1200 Ֆրանք կարելի էր յատկացնել վարժարանի ծախուց, ու այդչափ շնչին գումարով անհնար էր վարժարանէն յուսալ, ինչ որ իրաւամբ կ'ապասուէր սակաւաթիւ բայց կարեւոր ու յարաճուն դաղութի մը միակ կրթական յարկէն, որ կոչուած էր ըլլալ վառարան մը հայրենասիրութեան և կեդրոն մը հայկական դպրութեանց: Կարապետ Գայուստ ազգային դաստիարակութեան խնդիրն գէթ իր մահէն ետքը հիմնապէս լուծելու համար՝ իշխանավայել առատաձեռնութեամբ կտակագիր մը կ'ընէ և անով ի մէջ այլոց իր շինած վարժարանին կարեւոր կալուածներ կը նուիրէ:

Կտակն ինքնագիր է և թուրքերէն լեզուաւ շարադրուած, կը կրէ 1274 Շապան 1 թուականը, որ կը համապատասխանէ 1858 Մարտ 5/17ի Չորեքշաբթի օրուան. վկան է Խաչեր պէյ Միքայէլեան եւ հաստատողն Առաջնորդ Գաբրիէլ Սրբաղան:

Չենք կրնար ըսել թէ կտակագիրն գլուխ գործոց մ'է խմբագրական տեսակէտով, բայց

ապահովապէս գեղեցիկ ներշնչարան մ'է ուսումնասիրութեան, աղգասիրութեան, աղքատասիրութեան և կրօնասիրութեան: Բարերարն իր սյս կտակագրով տրամադրած է իրեն սեպհական ամբողջ ստացուածքն ի նպաստ այն հաստատութեանց և անձերուն, որոնք բարոյապէս և օրինաւորապէս իրաւունք մը ունին անոր վրայ. հոն վարժարանն իր բաժինն ունի, աղքատն՝ իրն, եկեղեցին՝ իրն, ժառանգորդներն՝ իրենցն, մինչեւ իսկ իր պաշտօնեաներն ու ծառաներն մաս ունին. ո՛չ ոք մոռցուած է և ոչ ո՛ք զրկուած:

Չանց ընելով կտակագրի այն կէտերն, որ բարերարին ժառանգորդաց ու ծառայողներուն կը պատկանին, անհրաժեշտ կը դատենք հոս ամփոփել անով աղգին եղած նուիրատուութիւններն:

1. Ասիրութի նահանգին Տէլճա գիւղին մէջ մէկ ագարակ չորս հարիւր ֆէտտան տարածութեամբ, իր պարունակութեամբը և անջատ տունով մը. հասոյթը իր հիմնած վարժարանին յատկանալի իր մահէն անմիջապէս յետոյ:

2. Կիզէ նահանգին Շէյխ Էթման գիւղին մէջ 340 ֆէտտան տարածութեամբ մէկ

ագարակ, մէջի բնակարանովը, 6000 արմա-  
ւենիներովը և այլն :

3. Նոյն նահանգին Ազիզիյէ գիւղին մէջ  
60 ֆէտտան մէկ ագարակ :

Բարերարին մահէն յետոյ այս երկու ա-  
գարակներուն բերքէն տարեկան վաճառուն էր-  
տէպ (\*) ցորեն հայ աղքատաց բաշխելի ու  
մնացեալ հասոյթն ալ իր կնոջ, քանի որ ողջ  
է կամ վերստին ամուսնացած չէ. հակառակ  
սլարագային, հասոյթն ամբողջ վարժարանին :

4. Պարտէզով երկու տուներ յԱղեք-  
սանդրիա Մահմուտիյէ ջրանցքին վրայ : Բա-  
րերարին մահէն յետոյ, ասոնց ալ հասոյթն  
ստանայ կինն, ցորչաւի ողջ է կամ կարգուած  
չէ. ու անկէ վերջ յատկանայ Աղեքսանդրիոյ  
մէջ եկեղեցի մը կամ վարժարան մը շինելու  
կամ այս վերջնոյն հասոյթ մ'ըլլալու. պայ-  
մանաւ որ եթէ կտակած կալուածներուն ե-  
կամուտը Գահիրէի իւրակերտ վարժարանի  
ծախքերուն չբաւէ, այդ երկու տուներուն  
հասոյթն ալ անոր կապուի :

5. Ղազարոս աղա Տ. Գասպարեանէ ու-

---

(\*) Մէկ էրտէպն իւր 150 քիլօ է :

Նեցած և մաս առ մաս գանձելի 6000 ոսկիի պահանջէն իր մահուան ժամանակ ինչ գումար որ մնացած է, անկէ տարուէ տարի 100 ոսկի յատկացուի Գահիրէի Խորէնեան վարժարանին աղքատ ուսանողաց հագուստ շինելու համար:

Կարապետ աղա Գալուստ իր նոյն կտակագրի մէջ, որու համար ամբողջ Հայ ազգն երախտապարտ պէտք է մնայ իրեն, կամք յայտնած է նաև անշարժ ստացուածքներուն կալուածագրերն կտակընկալ հաստատութեանց անուններուն դառնան, ի ձեռն Գահիրէի Առաջնորդարանին, զոր կարգած է կտակակատար:

Կարապետ Գալուստ իր կտակագրին մէջ և ոչ իսկ սովորական դարձած հոգեհանգստեան պաշտօնի կատարումը խնդրած է ազգէն, տարուան հինգ տաղաւարներուն այդ կրօնական արարողութիւնը կատարել և իր հոգիին համար աղքատաց ողորմութիւն տալը իր կնոջ վրայ պարտականութիւն դրած է կտակագրին մէջ:

Նշանակելի պարագայ մ'է հոս որ երբ Կարապետ Գալուստ այս կտակագիրը կ'ընէր, փոխարքաներուն մէջ ամենէն աւելի զինք սիրողն ու պաշտպանողն, Ապպաս փաշա Ա.



մեռած էր չորս տարիներէ ի վեր և կառավարութենէ անհատներու վարձու տրուած հանքերն ու գործարաններն կա՛մ այլեւս գոյութիւն չունէին եւ կամ նոր ընդունուած գրութեան համեմատ՝ կառավարութիւնն ինքուզակի կը շահագործէր զանոնք. հետեւաբար կարսպետ Գալուստ ի վիճակի չէր առաջուան մեծամեծ շահերն ակնկալելու, մասնաւոր թէ ինքն ալ ծերացած՝ երիտասարդական տարիներու աշխոյժն ու կորովը չէր զգար իր մէջ ու կը բաւականանար իր կալուածոց եկամուտներն և ի Պուլազ ունեցած բազմաթիւ շոգեհաւակներուն և խոշոր մակոյկներուն վարձքերն ստանալով և մեծաքանակ պահանջներու գանձումին ետեւէն ըլլալով:

Կարսպետ Գալուստ ամրան տաք եղանակին իսկ Եգիպտոսէ չէր հեռանար. տարին քանի մը շաբաթ կ'անցուծէր Հէլուանի հանդիպակաց վերոյիշեալ Շէյխ-Էթման գիւղի ագարակին բնակարանին մէջ. իր կենաց վերջին ժամանակներն գործէ բոլորովին ձեռընթափ՝ քաշուած էր այդ գիւղն, երբ Առաջնորդարանէն հրուէր ստացաւ դալու ի Գահիրէ, մասնակցելու այն խորհրդակցութեան,

որ տեղի պիտի ունենար Պոլսոյ Ազգային Պատրիարքարանէ եկած այն պաշտօնագրի մասին, որով կը յանձնարարուէր Ազգային Սահմանադրութեան գործադրութիւնն Եգիպտոսի մէջ: Հաւանաբար կարապետ աղա այդ խորհրդակցութեան ներկայ գտնուելու ժամանակ ունեցած չէ, վասն զի Գահիրէ գալէն մէկ երկու օր ետքը, 1864 Ապրիլ 8|20ի գիշերը յանկարծական մահուամբ կը վախճանի, իր Պիր Հումսուսի բնակարանին մէջ. գոյժը կայծակի արագութեամբ կը տարածուի քաղաքին ամէն կողմը. ընդհանուր սուգ և վիշտ պատճառելով ամբողջ ժողովուրդին, առանց խտրութեան ցեղի և կրօնքի:

Յուզարկաւորութեան հանդէսը տեղի կ'ունենայ հետեւեալ օրն, փառաւորապէս եւ իր դիրքին արժանի բոլոր պատիւներով. մարմինը կ'ամփոփուի ազգային գերեզմանատան մէջ, իր վաղամեռիկ սիրելեաց քով. շքեղ դամբարան մը կը բարձրանայ իր գերեզմանին վրայ հետեւեալ վերտառութեամբ.

« Դամբարան Ազն. Կարապետ աղայի Տէր Գալստեան Վանեցւոյ, պայծառափայլ իշխանի եւ բարերարի, որ հանգեաւ ի Տէր ամաց վաքսուն եւ երկուց յամի Փրկչին, յ'Ապրիլ 8, թողեալ ի սուգ անմխիթար գսիրելիս եւ գազգ իւր համօրէն »:

Կարապետ Գալուստ իր կենդանութեանը  
կը վայելէր ընդհանուր համակրութիւն եւ  
բարեկամութիւնն հայ և օտարազգի բարձ-  
րաստիճան անձնաւորութեանց, որոնցմէ ող-  
բացեալ մեծանուն Նուսրար վաշա, այնչափ  
մտերիմ էր իրեն, որ ի Պոլիս ամուսնութե-  
նէն յետոյ երբ Եգիպտոս կուգայ, իր տիկ-  
նոջ հետ քանի մը շաբաթ հիւր կը մնայ Գա-  
լուստի բնակարանն :

Կարապետ աղա ջերմ կրօնասէր ու եկե-  
ղեցի յաճախող մ'էր, ողորմած, բարի բայց  
բարկացող ու քիչ մ'ալ խստաբարոյ . կը սի-  
րէր զուարճութիւններն, բայց եթէ մինչեւ  
գիշերն ուշատեն ալ զբօսնուր և հաղիւ 1-2  
ժամ միջոց ունենար հանգստանալու, դարձ-  
եալ առտուն կանուխ կ'ելնէր անկողնէն, Նա-  
րեկէն որոշեալ գլուխները կը կարգար անհը-  
րաժեշտաբար և իր գործին կ'երթար անպատ-  
ճառ . կը հագուէր ինչպէս կը հագուէին ժա-  
մանակակից նշանաւոր հայերուն գրեթէ ա-  
մէնքը . մետաքսեայ երկար պարեգօտ մը իւ-  
պարթեւ հասակը կը ծածկէր պարանոցէն  
մինչեւ ոտքն, տրիպոլսեան գօտի մը կը սեղ-  
մէր իր մէջքը, կարճազգեստ մը պարեգօտին  
վրայէն մինչեւ գօտին, կուրծքին կողմէն բաց .

ճերմակ վաթթոցով ֆէս մը իր գլուխը, մեծ բառին նիւթական և իւրացական իմաստներով միանգամայն :

Կարապետ աղա Գալստեանի թողած հարստութեան ճիշտ քանակն չգիտենք, բայց անտարակոյս ազգին նուիրածներուն առնուազն քանի մը պատիկը կար. իր ժառանգորդներէն ոմանք սակայն առասպելական համեմատութիւններու կը բարձրացնէին անոր հարստութիւնն, յայտարարելով որ Փողերանոցին Տեսչութեան օրով ամբողջ երեք տարի կոխուած բոլոր ոսկեգրամներն Կարապետ աղա ինք կ'ստանար և փոխարէն իր անձնական գանձարանէն կուտար ձուլածոյներ նոյն մետաղէն, վասնզի կը սիրէր պահել նորատիպ և միւսնոյն թուականը կրող գրամներ :

Ազնիւ ընթերցողին համար սակայն, շատ աւելի շահեկան է գիտնալ Կարապետ աղա Գալստեանի ազգին նուիրած շարժուն ու անշարժ կալուածներու արժէքն. փութանք ուրեմն ըսելու թէ այդ արժէքն այսօր 430 հազար ֆրանքէն աւելի է և մեծ յոյս կայ որ ապագային կրկնապատիկ և ա՛լ աւելի բարձրանայ : Անշարժ ստացուածոց միայն Գահիրէի մասին այս տարուան զուտ արդիւնքը 29000

Ֆրանքի կը յանգի, մեծ հաւանականութեամբ որ ապագայ տարիներու մէջ ալ աւելի առատանայ :

Քանի մը խօսք ալ կտակի դործադրութեան մասին ու վերջացնենք :

Տէլճայի էպիստոլիէի արդիւնքն բարերարին մահէն անմիջապէս ետքը յատկացուած է վարժարանի ծախուց . իսկ Շէյխ-էթմանի և Աղիզիյէի արդիւնքն՝ Տիկին Արուսի այրի վիճակաւ վախճանելէն յետոյ, որ պատահած է 1887 Յուլիս 12/24ին : Նոյն թուականէն ասդին Աղեքսանդրիոյ տուներուն արդիւնքն ալ տեղւոյն Պատ. Թաղական Խորհուրդի տրամադրութեան տակ դրուած է վերջնապէս :

Շէյխ էթմանի և Աղիզիյէի ազարակներուն բերքէն քանի մը տարի վաթսունական էրտէպ ցորեն և Ղաղարոս աղա Տ. Գասպարեանի պահանջքի մասնավճարներէն քանի մը հարիւր ոսկի ստացուած և կտակի տրամադրութեան համաձայն բաժնուած է հայ աղքատաց և զգեստ շինուած վարժարանի կարօտեալ երկսեռ սանուց : Հետեւաբար այս կրկին հաշիւներէն պահանջ կար այրի Տիկին Արուս Գալստեանի մահուան ժամանակ . շնորհիւ աչալըջութեան և ջանից ժամանակին Ա-

ուաջնորդ Ամենապատիւ Իզմիրլեան Սրբազանի, այդ պահանջներուն փոխարէն Տիկին Արուսի ձգած ժառանգութենէն 37000 Քր.ի շափ գումար մը գանձուեցաւ և ամենամեծ մասամբ յատկացուեցաւ ազգային գետնի վերայ տան մը շինութեան, որու հասոյթն վարժարանն ու աղքատներն իրենց մէջ կը բաժնեն հաւասարապէս :

Վէճերու, դէպքերու, դատերու և ուրիշ պատճառներու հետեւանքով, կտակի պաշտօնական գործողութիւններն չյաջողեցան մինչեւ 1886 : Ի մեծ բարեբաղդութիւն Եգիպտոսայ գաղութին, այդ տարին Փարաւոններու երկրին Առաջնորդ ընտրուեցաւ Ամենապատիւ Տ. Մատթէոս Ս. Արքեպիսկոպոս Իզմիրլեան, որու ձեռք առած իմաստուն, շրջահայեաց ու հեռատես միջոցներուն և վսեմ թագւոր փաշայի ազգասիրական ջանքերուն շնորհիւ կարապետ աղա Գալուստի կտակն 1887ին, այսինքն բարերարին մահէն 23 տարիներ յետոյ, Եգիպտական կառավորութենէն ճանչցուեցաւ և Գահիրէի, Աղէքսանդրիոյ և նահանգաց դատարաններու մէջ արձանագրուեցաւ, կտակեալ անշարժ ստացուածոց կալուածագրերն օրէնքին պահանջած ա-

մէն ձեւակերպութիւններով ազգին անուան  
դարձան, և առ այս կարեւոր արձանագրու-  
թիւններն պատկանեալ սումարներուն մէջ կա-  
տարուեցան. և ազգն այսօր բացարձակ տէր  
է նոյն ստացուածքներուն, որոնց մատակա-  
րարութիւնն ալ իւր ձեռքն է :

Օրհնեալ ըլլայ յիշատակն ամէն անոնց,  
որ ստացուածքներու տէր կ'ընեն իրենց ազգն,  
երկոցս և յաւէտ օրհնեալ յիշատակն ԿԱՐԱ-  
ՊԵՏ ԱՂԱ ԳԱԼՈՒՍՏԻ :

## ԳԱՐՐԻԷԼ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Անցեալ կիրակի Հրեշտակապետաց տօնի յաջորդ օրն, հոգեհանգստեան պաշտօն կը կատարուէր քաղաքիս Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, Եգիպտոսի նախկին Առաջնորդ Գարրիէլ Եպիսկոպոսի համար: Ս. յս պաշտօնն, որ Սրբազանի մահէն վերջ 30 տարիներէ ի վեր անընդհատ կը շարունակուի, առիթ կ'ընծայէ մեզ փորձ մը ընել գէթ համառօտակի ծանօթացնելու համար «Փարոս»ի ազնիւ ընթերցողներն բազմերախտ եկեղեցականին կենսագրութեան մէկ քանի գլխաւոր գիծերուն հետ, փափաքելով որ կարողք փոքրիկ հատորի մը նիւթ ընեն անոր գործոց բովանդակ պատմութիւնը, որ ինչ ինչ տեսակէտներով կը խոստանայ յոյժ շահեկան ըլլայ:

1832ին կիրակոս Սրբազան կը հրատարի Եգիպտոսի առաջնորդութենէն, Երուսաղէմի Ս. Պատրիարքն, որու իրաւասութեան ներքեւ էր այն ատեն այս վիճակը, նոյն պաշտօնին



կը կոչէ, անշուշտ կանխատու հաւանութեամբ  
թեմականաց, մարաշցի Գաբրիէլ Եպիսկո-  
պոսն՝ այն ատեն զեռ վարդապետ, որ եօթը  
տարիներէ ի վեր արդէն Աղեքսանդրիա կը  
գտնուէր և բոլոր միաբանից մէջ այս պաշ-  
տօնին ամենէն արժանաւորը նկատուած էր  
իր կենցաղագիտութեամբ:

Այդ թուականին Հայերն Եգիպտոսի մէջ  
շատ սակաւ թիւ էին — առ առաւելն քանի  
մը հարիւր հոգի, — Գահիրէի Հայ ժողո-  
վուրդն էր անուամբ անշարժ կալուած չունէր  
դրեթէ, ու հանրային հաստատութեանց՝ Ա-  
ռաջնորդարանի, վերնայարկի մը մէկ սենեակն  
հաստատեալ Ս. Սարգսի Մատրան, «Իպրա-  
տան» ծախքերն ու աղքատաց նպաստներն  
մեծաւ մասամբ կը հոգացուէին Երուսաղէմի  
Ս. Յակոբեանց Վանքին անուամբ եղած կալ-  
ուածոց (\*) արդիւնքներէն: Աւելորդ է ըսել

---

(\*) Այս կալուածոց խնդիրն ետքէն յուղուած  
է Երուսաղէմի Պատրիարքութեան և Եգիպտոսի  
Առաջնորդութեան սիջիւ և 1869ին անոնց մեծ  
մասն Երուսաղէմի սեպհականութիւն ճանչցուած  
է վերջնապէս ու մատակարարութիւնը Վանքին  
յանձնուած:

Թէ այս շորս ճիւղերու համար ծախսուած դրամն հեռի էր արդի համեմատութիւնը ունենալէ . աղքատաց և դպրատան բաժիններն մանաւանդ շատ նիհար էին և երկուքին համագումարը տարին 2—3000 ֆրանքէն անդին չէր անցներ :

Գաբրիէլ Վարդապետ գիտցաւ քիչ ատենի մէջ սիրելի ընծայել իր անձն և յարգելի իր պաշտօնն Հայ ժողովրդեան՝ որ ոյժ կուտար իր բարեկապատակ խորհրդոց ու գործոց, օտարազգեաց՝ որ իր աղղեցութեան կը դիմէին շատ կարեւոր պարագաներու մէջ եւ երկրին իշխանաց՝ որք սիրով կ'ընդունէին իր խնդիրներն ու կը կատարէին :

Սրբազանին ջանից անդրանիկ պտուղն եղած է Ս. Աստուածածին եկեղեցին, որու յատկացեալ տեղւոյն վրայ բարձրացած քանի մը տուներու և մէկ սինակոկի գնման ու Տաճարին շինութեան համար ծախք եղած է 120,000 ֆրանքէն աւելի գումար մը : 1838ի վերջերն աւարտած էր եկեղեցւոյ շէնքն, եւ ամէն կողմէ միտքէնը պատրաստուած էին փայլուն եղանակաւ վաճատրել Գաբրիէլ Վարդապետի եօթնամեայ անխոնջ ջանքերն, հետեւաբար կը գրուի Երուսաղէմի Պօղոս

Պատրիարքին և կը խնդրուի Գարրիէլ Վարդապետի եպիսկոպոսացումը : Պօղոս Պատրիարք կուտայ իր հաւանութիւնը և նոյն տարւոյ Յունիս 15/27ին Գարրիէլ Վարդապետ կիւլիկիոյ Միքայէլ կաթողիկոսէն եպիսկոպոս կը ձեռնադրուի Եգիպտոսի վիճակին վրայ : Տարւոյն վերջերը կ'օծուի Եկեղեցին և յետայնու հոն միայն կը կատարուի հանապազօրեայ հոգեւոր պաշտամունք :

Հաղար ութը հարիւր քառասուն երեքին կը վախճանի Զմիւռնիայի Պօղոս պէյ Եւսուֆ, 19րդ դարու հայութեան հոյակապ փառքերէն մին, որ ամենափայլուն էջեր գրաւած է Եգիպտոսի պատմութեան մէջ : Պօղոս Պէյի կենդանութեան ատեն ազգին նըուիրած կարեւոր կալուածք՝ մահէն յետոյ պահ մը կորսուելու վտանգին կը մատնուին, Գարրիէլ Սրբազան կը ջանայ ու կը յաջողի վտանգն անհետացնել, որով ազգը կը շարունակէ վայելել և կը վայելէ ցարդ նոյն կալուածոց արդիւնքներն, որք Ս. Ղեքսանդրիոյ ազգային բարենպաստակ հաստատութեանց յատկացեալ են :

Պօղոս պէյի մահէն գրեթէ ան'իջապէս յետոյ՝ վարչական տեսակէտով ծանր խնդիր

մ'ալ տեղի կ'ունենայ . հովիւ և ժողովուրդ  
12 տարիներէ ի վեր իրարու հետ ապրած ,  
փոխադարձաբար գոհ էին իրարմէ և համե-  
րաշխարհար կ'աշխատակցէին յօգուտ հասարա-  
կայ : Ճիշտ այս միջոցին , բարի առաւօտ մը  
Աղեքսանդրիա կը հասնի Երուսաղէմի միա-  
բաններէն Գաւիթ վարդ . ի ձեռին ունենալով  
Չաքարիա Պատրիարքին կոնդակն , որով նշա-  
նակուած էր Առաջնորդ Հայոց Եգիպտոսի :

Պատրիարքական այս տնօրինութիւնն բնա-  
կանաբար շատ ցուրտ տպաւորութիւն կընէ  
թէ Եգիպտոսի ժողովրդեան վրայ , որ յան-  
կարծակիի կը բերուէր և թէ Գաբրիէլ Սրբ  
բաղանի վրայ , ոչու արժանապատուութիւնն  
այնքան խորապէս կը հարուածուէր , հետե-  
ւաբար բուռն ընդդիմութեան կը բաղխի այդ  
անհեռատես տնօրինութիւնն և Գաւիթ վար-  
դապետ կ'ստիպուի ձեռնունայն ետ դառնալ  
և այն օրէն Եգիպտոսի Առաջնորդութիւնը կը  
դադրի Երուսաղէմի իրաւասութեան ենթար-  
կուելէ և կը դառնայ վիճակ Կ. Պոլսոյ Պատ-  
րիարքութեան :

Գաբրիէլ Սրբազան սրտով ու քսակով հա-  
րուտ կ'արապետ աղա Գալստեան ջերմ բա-  
րեկամներ էին իրարու հետ և յաճախ տե-

սակցելու առիթներ ունէին . և հաւանական է որ այս տեսակցութեանց առթիւ Վասպուրական աշխարհի այդ մեծանուն զատակն իր կարգ մը բարեգործութիւններէ յետոյ՝ ներշնչուած է այն գեղեցիկ խորհուրդով, որու գործադրութեա՛ր՝ Խորէնեան (այժմ Գալստեան) վարժարանն հիմնած ու ազգին նուիրած է 1854ին, անոր մատակարարութեան համար նուիրելով կարելոր գետին մը իր կենդանութեանն և կտակաւ մը ուրիշ կարելորներ յետմահու, որ պատահած է կտակին թուականէն քանի մը տարի յետոյ,

Սրբազանն, իր հիւանդութեան պատճառաւ՝ որ երկար տարիներէ ի վեր զինք կը նեղէր, 1858ին, բժշկաց խորհուրդով կը մեկնի Իտալիա, և ժամանակ մը Նարոլի, Ֆիորէնցա և այլուր դարմանուելէ յետոյ կը վերադառնայ Եղիպտոս, որու վեհանձն իշխանը Բարձր Սայիտ փաշա 500 ոսկի նուէր մ'ըրած էր այս ուղեւորութեան ծախուց համար :

Գաբրիէլ Սրբազան, իր ժողովրդեան հանրային պէտքերուն հետզհետէ աճիլը տեսնելով, 1860ին տեսակցութեան մը առթիւ կ'ըսէ Սայիտ փաշային — «Աղքատները գիշերն երազս կուգան և կը մեղադրեն զիս թէ իրենց

համար ինչո՞ւ չեմ հայցեր Ձեր Բարձրութեան հանրածաւալ դժու թիւնը»։ Իշխանը կը ժպտի և Սրբազանը կը խնդրէ ու կ'ստանայ յանուն աղքատաց 600 ֆէտտան տարածութեամբ ազարակ մը վերին Եգիպտոսի մէջ ։

Հաղիւ երեք տարի կը բոլորի այս նուիրատուութեան վրայ, Փաշան կը հաճի հարցնել Սրբազանին թէ ինչպէս է Առաջնորդարանի ելնտական վիճակը ։ «Ձեր նուէրին տարեկան արդիւնքը բաժնեցի և բաժնողին բաժին չի մնաց» կ'ը պատասխանէ Սրբազանը, — «Ուրեմն բաժնողին պէտքերուն համար կը նուիրեմ ուրիշ ազարակ մը» կ'ը յայտարարէ վեհանձն Փաշան և կը շնորհէ 400 ֆէտտան գետին մը՝ որ կը գտնուի Ստորին Եգիպտոսի մէջ և որւ կայուածագիւն ալ աղքատաց անունով հանել կուտայ Սրբաշանն ։ Իշխանական շնորհ սոյն երկու կայուածոց տարեկան զուտ արդիւնքն 16,000 ֆրանքէն աւելի է այսօր ։

Գարրիէլ Սրբազանի օրով ազգն կը տիրանայ նաեւ ուրիշ կայուածներու, որ սակայն յիշուածներուն չափ կարելի որութիւն չունին ։ Նոյն ժամանակ Առաջնորդարանն ունէր այնպիսի առանձնաշնորհումներ որ չունի այսօր ։


հետեւանօք երկրին զառական և վարչական կազմակերպութեանց յաջորդական փոփոխմանց :

Գարրիէլ Եպիսկոպոս ծերանալ սկսած և հիւանդութիւնն հետզհետէ ծանրացած էր, երբ՝ եթէ չենք սխալիր, 1863ին վերջերն Եգիպտոս կուգայ Մեարոպ վարդապետ՝ Սահմանադրութիւնը դործսողելու պաշտօնով : Ժողովրդեան քուէարկութեամբ կընտրուի «Թաղական Խորհուրդ» մը, ժողովներ կազմակերպելու խորհուրդն ծրագրային՝ վիճակի մէջ կը մնայ եւ Թաղականն Առաջնորդին հետ կ'ստանձնէ աղգային ամէն կարգի դործոց կառավարութեան ղէկն :

Մեարոպ վարդապետի մեկնումէն յետոյ՝ տեղւոյս Թաղական Խորհուրդն Պօլսոյ Ազգ. Պատրիարքարանէ կը խնդրէ որ արժանաւոր եկեղեցական մը ղրկէ Եգիպտոս, իրեւ փոխանորդ Գարրիէլ Սրբազանի . Պատրիարքարանը կը ղրկէ Մկրտիչ Եգիպտոս (յետոյ կաթողիկոս Կիլիկիոյ) որ 2-3 տարի պաշտօնավարելէ յետոյ կ'ստիպուի թողուլ իր պաշտօնն ու պաշտօնատեղին : Անոր յաջորդ կը նշանակուի Տ. Կարապետ Հայրն, որ Գարրիէլ Սրբազանէ ձեռնադրեալ միակ քահանան էր որ դեռ կ'ապրի :

Գարրիէլ Սրբազանի հիւանդութիւնն օրէ  
օր կը զայրանայ և այս պատճառաւ կ'ա-  
ռա՛ծնանայ Մարմինայի գերեզմանատան դէմ  
գտնուած աղգային տունն և հոն կը վախճանի  
1867 Ապրիլ 21ին (Հ. Տ.) իբր 65 տարեկան ։  
Ազգն ի նշան երախտագիտութեան մեծահան-  
դէս յուղարկուորութեամբ կ'ամփոփէ հան-  
գուցելոյն մարմինը Ս. Եկեղեցւոյ գաւթին մէջ  
և մարմարեայ վայելուչ շիրիմ մը կը կանգնէ  
անոր վրայ՝ համառօտ այլ պերճախօս յիշա-  
տակարանաւ մը ։

Գ.սհիւ.է, 14/26 Նոյմ. 1897, ՓԱՐՈՍ, քիւ 54







## ԿԱՐՏԻՈՐ ԿՐԻՊՏԱՆՆԵՐ

---

Նրեա	Միտոյ	Ուղիւղ
2	34»	340
4	916	969
22	1831	1839
95	1883	1833



Ն Ի Ի Ք Ե Ր Ո Ւ Յ Ա Ն Կ

	Երես
Յառաջաբան	Ա
Ա. — Հայերը Թաթիսեաններու իշխանութեան տակ	1
Բ. — Հայերը Թաթիսեաններու օրով (969 — 1160 թ. Ե.)	4
Գ. — Հայերը Էյուպեաններու եւ Մեմֆիսներու օրով (1171 — 1516 թ. Ե.)	13
Դ. — Հայերը՝ Բ. Դոնիկի ղրկուած կուսակալներուն օրով եւ Թրանսսական արշաւանքի ժամանակ (1517 — 1801 թ. Ե.)	21
Ե. — Հայերը՝ Մուհամմէտ Ալիի օրով, ժ.թ. դարու սկիզբէն մինչեւ մեր օրերը	25
Կարապետ Գալուստ	94
Գաբրիէլ Եպիսկոպոս	115



